



# ԻՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ  
ԱՏՐԻԱՐՔՈՒԹԵՄՆ  
ՀԱՅՈՐ  
ՆՐՈՒՍԱԴԱՄԻ

Ծ ՏԵՐԻ

ԺԲ

1976





Տ.

ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆ

1976

Դեկտեմբեր

Թիւ 12

1976

December

No. 12

# SION


VOL. 50

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY  
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press  
Jerusalem



### ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ

Ներկայ թիւով, ՍԻՈՆ կը լրացնէ իր հրատարակութեան յիսուն տարին: Եթէ նման հանգրուաններ պատճառ են հպարտութեան և հրճուանքի, անոնք պէտք է ըլլան նաև ու մանաւանդ հաշուեյարդարի առիթներ, պատեհութիւններ՝ ինքնաքննութեան և ինքնադատութեան:

ՍԻՈՆԻ Նոր Շրջանը սկսաւ Յունուար 1927ին, մասնաւոր ջանքերովը Երջնկ. Տ. Եղիշէ Դուրեան Պատրիարքի: Այդ օրէն մինչև ներկայ թիւը, Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան պաշտօնաթերթը լոյս տեսած է անխափան, նոյնիսկ երբ այս երկրին վրայ ծանրացած են պատերազմի կապարեայ ամպերը: Արտասահմանի մեր մամուլին դժուար պայմանները նկատի ունենալով, ուր մատի վրայ կը համրուին քանի մը տասնամեակներու կեանք ունեցող թերթերը, ՍԻՈՆԻ յիսնամեայ անընդմէջ հրատարակութիւնն իսկ որպէս չափանիշ մը պէտք է ընդունիլ այն հոգածութեան որուն առարկայ է ան Ս. Աթոռին կողմէ, և այն արժէքին ու կարեւորութեան՝ զոր իրեն կու տան Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հայրը և Ս. Տակոբեանց Միաբանութիւնը:

Սակայն պարզ է որ երկարակեցութիւնը ինքնին անիմաստ կը դառնայ, եթէ ապրուած կեանքին կը պակսին նպատակը և ոգին:

Արդ, ՍԻՈՆը սկզբնաւորողները և անոնց գործին շարունակողները գլխաւոր միակ նպատակ մը հետապնդած են ու կը հետապնդեն ցայսօր. «Գոհացում տալ հոգեւոր ա՛յն պէտքին՝ զոր կը ըզգայ մեր բարեպաշտ ժողովուրդը, ո՛ւր և ի՛նչ պայմաններու մէջ ալ որ ապրի»: Հայաստանեայց Եկեղեցիի յուսաւորչաւիմն դուսնանքին և աւանդութիւններուն պահպանն ո՞ն տարածողն է ՍԻՈՆը

ուրեմն, առաքելութիւն մը՝ որ նշանաբանը եղած է դարերով եւրոսադէմի Հայ Պատրիարքութեան: Պաշտօնաբերքին յիսուն տարուան հաւաքածոն քերթողը հոն պիտի գտնէ, գրեթէ իւրաքանչիւր քիւի, այս նպատակին մարմին հազցնող ու կենդանացնող ոգին, անշեղ և տևող, ոսկիէ նուրբ քելի մը նման էջէ էջ անցնող և ամբողջութիւնը միացնող: Իբրև խօսնակը Հայ Եկեղեցիի ամենէն կարևոր նուիրապետական Աթոռներէն մէկուն, անոր խօսքը առաջին իսկ օրէն մեծ կշիռ ունեցած է և ՍԻՈՆին նայած են Հայ հաւատացեալ բազմութիւնները:

ՍԻՈՆի առաջին շրջանը երբ կը սկսէր ճիշդ հարիւր տաս տարիներ առաջ, 1866 Յունուարին, անոր խմբագիրները, իրենց «Յայտարարութիւն»ին մէջ ի միջի այլոց կը գրէին. «Սիօնը իր ընդունած օրինաց համեմատ և իբրև ագրիւր՝ յորմէ ամենայն օրէնք կ'իյնան, սիրոյ և խաղաղութեան դրօշակաւ կ'ընծայէ գինէք ընդհանուր Ազգին. կը փութայ ամոր բազմամեայ ակնկալութիւնները ըստ կարի լեցնել»: Եւ իրապէս, այս պաշտօնաբերքը իր ամբողջ գոյութեան ընթացքին նպատակ ունեցած է սիրոյ, խաղաղութեան և համերաշխութեան շեփոթահարը ըլլալ, իրեն սկզբունք ունենալով Հայաստանեայց Եկեղեցիի ամբողջականութիւնը և Հայ Ժողովուրդի միութիւնը: Ան, իբրև ոչմարիտ քարգման երուսադէմի Հայ Պատրիարքութեան իզմբնուն և իստպանբնուն, ջատագովը եղած է Հայաստանեայց Եկեղեցիի միասնութեան՝ գլխաւոր ունենալով յաւերժական Սուրբ Էջմիածինը:

ՍԻՈՆ տակաւին, մանաւանդ իր Նոր Շրջանի ընթացքին, եղած է գրական, բանասիրական և հայագիտական քերթ մը. ուր երևցած են արտասահմանի և յամախ Հայաստանի լաւագոյն մասնագէտներու ուսումնասիրութիւնները:

ՍԻՈՆ Սուրբ Երկրի մէջ հրատարակուող առաջին ամսաթերթը կը հանդիսանայ, ինչպէս որ Սրբոց Յակոբեանց Տպարանը, հիմնուած 1833ին. առաջինն է նոյն վայրին մէջ: Այս երկուքին ալ հիմնադրութիւնը կատարուած է այնպիսի շրջաններու, երբ Ս. Յակոբեանց վանքը միութեան դժուարութիւններու ենթակայ էր, իբրև հետեւանք Ս. Տեղեաց մէջ իր դարաւոր իրաւունքներն ու սեփականութիւնները պաշտպանելու համար ունեցած երկարատև դատերուն: Այլ այդ նեղութիւնները արգելք մը չեն եղած երբեք որ տոարանը չգործէ անխափան մինչև այսօր. և ՍԻՈՆը չհրատարակուի կանոնադրաբար: Պաշտօնաբերքը միութեան շահի ազգիւր մը չէ եղած և չէ. ընդհակառակը, տրուած ըլլալով որ հրատարակուող օրինակներուն ջախջախիչ մեծամասնութիւնը նուէր կը դրկուի. ան բեռ մըն է մանաւանդ այս օրերուն՝ երբ տպագրական բոլոր միութեան տարապայմանօրէն սղած են: Սակայն այդ բեռը քաղցր է. գոր սիրով կը կրէ Ս. Յակոբեանց Միաբանութիւնը, որովհետև կը հաւատայ որ ՍԻՈՆ պահանջքի մը գոհացում կու տայ և արտասահմանի մամուլին հետգիտել նոսրացող շարքերուն մէջ, վիտական դեր մը ունի կատարելիք:

Այդ համոզումով է որ ՍԻՈՆ կը քնակոխէ իր երկրորդ յիսնամեակը, անսակարկ նուիրումի և աշխատանքի կէս դարը բոլորելէ ետք:

Ա. Գ.



## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսի Մայր Աթոռիս Դիւանը լիազօրուած է վշտով հաստատելու թէ Հայ Կաթողիկէ մեր հոգեւոր եղբայրներից մմանք, վերջին տարիներին լծուած են դաւանափոխութեան աշխատանքի մեր Մայր Եկեղեցու եւ Ժողովրդի ծոցում, իսկ Լեւոնեան միաբանութեան անդամները Հռոմում, հրապարակաւ քաջալեր ու հովանաւորող են հանդիսանում Մայր հայրենիքը լքողներին:

Մայր Աթոռս սպասում է Հայ Կաթողիկէ միաբանութեանց անդամներից՝ յարգել Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու քրիստոնէական բազմադարեան հեղինակութիւնը, մեր օրերի միջեկեղեցական էկումենիկ յարաբերութիւնների բարերար ոգին եւ մեր վերածննդած Ժողովրդի հայրենաշէն զգացումները:

ԴԻԻԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

20 Նոյեմբեր 1976 թ.

Ս. Էջմիածին

## ԿՐՈՆԱԿԱՆ

## ՄԵՐ ՊԱՐԺԱՆՔԻ ԱՌԱՐԿԱՆ

«Այլ իմա քաւ լիցի պարծիլ, բայց միայն  
ի խաչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»  
(Գաղտ. Զ. 14) :

Եթէ լրջօրէն քննելու ըլլանք նկարագիրը մեզի հետ առօրեայ յարաբե-  
րութեան մէջ եղող մարդերուն, դժուար պիտի չըլլայ նկատել թէ ամէն անհատ  
մէկ կամ աւելի բաներով կը պարծենայ: Պարծենկոտութիւնը, մեծամոլու-  
թեան հոմանիշ, մէկն է ընկերութիւնը ապականող մոլութիւններէն: Գոռոզու-  
թեան ու ամբարտաւանութեան ճամբայ բացող և մեզ ճշմարտութեան ճանա-  
պարհէն շեղեցնող մոլութիւն մը:

Հարուստը կը պարծենայ իր դիզած գումարներով, գիտունը՝ իր ու-  
ղեղին մէջ ամբարած գիտութեամբ, հերոսը՝ իր քաջագործութիւններով և  
մարդիկը՝ իր մարմնով: և վերջապէս ամբարիշտներ՝ որոնք կը պարծենան ի-  
րենց առաջ զլած սուտերով, խարդախութիւններով ու մարդերը ծուղակի մէջ  
ձգող վարպետօրէն գործադրուած մեքենայութիւններով:

Պօղոս առաքեալ առկայն իր պարծանքի առարկան կը դաւանի միայն  
ու միայն Քրիստոսի խաչը: Բայց, մեր բարեպաշտութիւնը ու մեր Տիրոջ խաչի  
ճամբուն հետեան ըլլալու առաքինութեամբը պարծենալը մեղք մը չէ՞ իր կար-  
դին, ցուցամոլութիւն մը, փարիսեցիական յանձնապառտան արարք մը, ինք-  
նագովութիւն մը՝ առաւելագոյն պարագային:

Պարծաճ բառը Պօղոս առաքեալի համար ունի սովորաբար կարծը-  
ւածէն շատ աւելի խորունկ ու լայն իմաստ: Արժանիք մը ցուցաբերած կամ բա-  
րի գործ մը կատարած անձին զգացած գոհունակութիւնը, այդ արարքին մեղի  
պարզեւած երանութիւնն է որ կ'իմացուի հոռի պարծաճ թառին ներքեւ:

Ծնողք մը՝ որ պարկեշտ ու հաւատարիմ, ազգին ու մարդկութեան օգ-  
տակար հանդիսացող զաւակներ է հասցուցած՝ կ'ունենայ ներքին այն գոհու-  
նակութիւնը, հրճուանքը՝ որ իրեն պարծենալ կու տայ անոնցմով: Ուսուցիչը՝  
որ լաւ կերպով հերկած է անդամատանը իր աշակերտներու մատղաշ ուղեղնե-  
րուն՝ չի կրնար չհրճուիլ անոնց բարեբեր անուամբն եւ զարգացումին դիմաց:  
Պարտիզպանը՝ որ լաւ մշակած է իր արոքը, չի կրնար չտաննալ անհուն խառ-  
դաղատանքը ի տես իր քրտինքին արդիւնքը եղող ատոք հունձքին: Եւ վերջա-  
պէս, անձնդիր հոգեւոր հովիւը չի կրնար իր անպուսպ գոհունակութիւնը չար-  
տայայտել երբ իր ինամբին յանձնուած հօտին հոգեւոր անդամատանին մէջ նըշ-  
մարէ անունն ու ծաւալումը բարոյական արժէքներու, բազմացումն ու ընդ-  
հանրացումը՝ աստուածահաճոյ ու մարդանուէր արարքներու:

Նոյն այդ գոհունակութիւնն էր անտարակոյս որ Պօղոս առաքեալ Եւ-  
նեցաւ իր կեանքի վերջալոյսին:

Բայց, հարց կրնան տալ ոմանք, ինչո՞ւ պախարակելի են մեծագործ ու

համբաւութեամբ անժամանակութիւններ, երբ կը պարծենան իրենց արձանագրած լաւ ու օգտաւատ արարքներով:

Կրօնական տեսանկիւնէն բացի, եթէ տրամաբանօրէն մօտենանք հարցին, դարձեալ պիտի տեսնենք թէ որքան անտեղի է և անհեթեթ՝ աշխարհիկ արժէքներով պարծենալու անախատութիւնը:

Հարուստը իրաւունք չունի պարծենալու իր դիզած գումարներով, նոյնիսկ եթէ անկէ առատ բաժին հանած ըլլայ զրկեալներուն կամ բարենպասակ հաստատութիւններու և ձեռնարկներու, քանի որ նախ այդ գումարները կրնայ ստացած ըլլալ ժառանգականութեամբ կամ բախտին մէկ նպաստաւոր դարձումով ու ժպիտով, և յետոյ ու մանաւանդ՝ որովհետև այդպէսով մեղաշարժ կ'ըլլայ Տէրունական պատգամին հանդէպ որ կ'ըսէ թէ մեր ձախ ձեռքը անգամ պէտք չէ որ լուր ունենայ մեր աջ ձեռքին գործած բարիքէն, և թէ ծածկաբար ըրած մեր բարիքներն են միայն որոնք պիտի հասուցուն մեր Երկնաւոր Հօր կողմէ յայտնապէս (Լեւրան քարոզ): Մարդիկը կամ արուեստագէտը իրաւունք չունի պարծենալու իր մարմնի կամ մտքի կարողութիւններով, որովհետև Աստուած է անոր տուիչը և մենք մեր ջանքերով չէ որ կը յաջողինք մեզի սեփականացնել մեզ բոլորին հիացմունքի առաքկան դարձնող փնտռուած ու բարձրօրէն գնահատուած ձիրքեր: Գիտունն ալ իրաւունք չունի պարծենալու դիտելիքները լաւագոյնս իւրացնելու աստիկ իր հզօր բանականութեամբ, քանի որ ինչպէս բոլոր բարիքներուն՝ նոյնպէս ալ այդ կարողութեան տուիչն է տիեզերքի Արարիչը:

Անտեղի պարծենկոտութիւնը կամ ցուցամոլութիւնը մեծագոյն ու կործանարէր ախտերէն մէկն է մարդկային ընկերութեան: Կան ունեւորներ, որոնց բարեգործութեան շարժառիթը ուրիշներուն օգնելուն հետ — ու երբեմն նաև փոխաբէն — փառաւորումն է իրենց ճշմարիտ անձերուն: Անոնք իրենց անձնասիրութիւնը շոյող, իրենց հպարտ եւրիս դահցում տուող արարքներ են լոկ:

Ընթերցող ըրիտօրէն սակայն դիտէ իբր ընել՝ տալու, ուրիշին օգտակար եղած ըլլալու զգացումին առթած հրճուանքն ու գոհունակութիւնը, առանց ամենադոյզն ցուցամոլութեան: Ան չի պարծենար նիւթով ու անով պայմանաւոր կորստական ու վաղանցուկ արժէքներով, իրողութիւններով: Իր ըրած բարիքներուն համար հատուցում ու վարձատրութիւն չի փնտռեր իր նըմաններէն: Իր Երկնաւոր Հօրը կամ քր կատարած ըլլալու գիտակցութիւնը բաւէ զինքը ընկու գոհ ու երջանիկ արարած ժը, հակառակ զինքը չըջապատող աննպաստ ու երբեմն մինչև իսկ դժոխային պայմաններուն: Նրպաստ ու երբեմն մինչև իսկ դժոխային պայմաններուն:

Նոյնը չէ՞ միթէ պարագան Պօղոս առաքեալին, որ չբարի պատերազմք մղած ըլլալուն գոհունակութեամբը առցուն, Քրիստոսի խաչին բացի ոչինչ կը գտնէ իբրև իր պարծանքի առաքկան: Եւ ինչպէ՞ս կրնայ մարդ պարծիլ Քրիստոսի խաչով, եթէ չէ քալած խաչեալ Աստուածորդիին բացած ճանապարհէն, որ այս աշխարհի քարքարոտ արահետներէն սահմանուած է մեզ առաջնորդելու նաւահանգիստը խաղաղութեան:

Հետև. մնանք ուրեմն սին ու փուռ արժէքներով պարծենալի: Ընդունինք Տէրը իբրև տուիչը բոլոր բարիքներուն և կեանքի մէջ մեր գտած յաջողութիւններու պարագային գիտնանք առաջին առթիւ երաստապարտ ըլլալ Իրեն և փառք տալ Անոր սուրբ անունին:

ԳԷՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԻԶԵԱՆ

## Մ Օ Ր Ս

Սօսիի շուֆին դեռ կը նըստիս դուն,  
 Կարծես թէ երէկ, կարծես թէ այսօր,  
 Թոյլ խորութենէն մայր քու մագերուն  
 Կը բըխի գէմֆդ,  
 Ուրիշ աշխարհի ցանապարհ առած  
 Լուսնի մը հանգոյն:

Կեցած եմ իր դէմ,  
 Ոտֆերուս փռշին ցանապարհներու,  
 Մագերուս վըրայ աստղերու մոխիր:  
 Փակ են շըրթումֆներ,  
 Մեռած տատրակի կոպերու նըման,  
 Իր աչքերու մէջ ալ չի պըսպըզար  
 Բացուող օրերու լուսաստղը ազուոր:

Բաց շըրթումֆներդ, մայր իմ սիրելի,  
 Եւ պատմէ ինծի մեկնող օրերու  
 Հէֆիաթն անաւարտ:  
 Դուն գիւղն իմ աղուոր, երազ մը ինչպէս  
 Թառած շըրթումֆին՝ անցած օրերու,  
 Որու քովիկէն կը վազէր առուն  
 Զուրերուն՝ առած նշխարն արեւուն:  
 Տնակն իմ թափուր,  
 Որու կըտուրին՝ ամէն երեկոյ,  
 Կը բացուէր լուսինն վարդի պէս ներմակ:

Հեռուն կը կենան  
 Լեռները խաչուած իրենց ստուերին,  
 Իսկ անունց լանջին՝

Վանքն է կիսաւեր իր բեկուած խաչով,  
Որ մինչեւ երէկ զանգերու բերնով  
Կը խօսէր արդար իր Աստուծոյն հետ:

Մշակներն ահա դաշտերուն զըմբուխտ,  
Արտերուն ոսկի,  
Որոնք Աստուծոյ մեծ աչիւն առջեւ,  
Կը հանդերձէին հրնձառ առ հրնձամ  
Բարիքն հողերուն,  
Բանալով սեղան իրենց սրբտին պէս,  
Անօթի եւ կուշտ մարդերուն բոլոր:

Կը մայիմ մօրս աչքերուն խոնար,  
Անոնց ջրհորէն կը մային ինծի  
Մեռելներս անթաղ,  
Որոնք չմանչցան սփոփանքն հողին,  
Արեւուն ներքեւ մեր այս աշխարհին:

Իսկ արիւն բուրոյ հողերուն վըրայ՝  
Կը քալէր մորէն Յիսուս խաչն ուսին՝  
Ոտերնով բոպիկ:

ԵՂԻՎԱՐԴ



## ԱՇՆԱՆԱՅԻՆ

Թռչուններուն տօնահանգէսն ո՞րք է հիմա,  
Ամառուան գով ու ասմագուն երկինքներուն.  
Եւ ո՞րք գացին ծիծեռնակներն, ո՞րք հեռակայ  
Ու անծանօթ հորիզոններ երազամոյն:

Քաժանուիէն այդ տխրաւէտ իջեր է, տե՛ս,  
Իր կարօտէն հիւանդ՝ տրտում մի դալկութիւն,  
Փռդոցներուն և մայթերուն կուրծքին կարծես,  
Կը հնչէ լուռ, անցելայուշ երգ մ'օրօրուն. . .:

Յոգաբարձիւք առաւօտներ պաղ, սրսիտն,  
Օ՛ր, դալկահար տերևներուն շշուկն անուշ,  
Խոնջ արևուն դէմքն ուժասպառ ու մուգուն  
Կ'օրքեն հիւանդ կարօտ մը խոր ու քայծամուշ:

Աշման դալուկ չո՛րք տերևներ, մէկ-մէկ ինկած  
Ծառերն ի վար գետնին վրայ լուռ ու խաղաղ. . .  
Դուք արցունքներ ըլլաք կարծես աչքերէ քաց  
Ցօղուած վրան այս մայթերուն տրտմաշաղախ:


Ճաւրաններուն վրան լըճուած, հիմա կուլաք,  
Կը քափառիք ուղեկորոյս հովու շունչին,  
Այդ ի՞նչն է որ կը հալածէ ձեզ շարունակ,  
Սէ՛րը գարնան, քէ մօտալուտ բուքը ձիւնին:

Թափանցէ՛ք հիմա անտուն և անօթի,  
Երագելով անցէ՛ք մոլոր ճամբաներէն,  
Ե՛տ կանչեցէ՛ք գարունն անցած կանաչ կեանքի,  
Եւ օր մըն ալ անհետացէ՛ք ձմրան ցուրտէն:

ԳԵՈՐԳ ՀԱՏԻՏԵԱՆ

(Գ. Սիւնու)

Երուսաղէմ



## Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Երգըդ ըլլայ թող անկեղծ և սրբաւայոյզ ու յըստակ,  
 Ըլլայ խորունկ խորքն անոր, պարզ երևի բայց յատակն.  
 Սըլացքն անոր՝ արծիւի՝ երկինքին մէջ հովանի,  
 Բայց ընթերցողն՝ թւերուն առած ան հետն իր տանի:

Ուրիշի մը յաղթանակը կըրցեր ես թէ սրբաւանց ծափել,  
 Ուրիշի մը ցաւին դիմաց կըրցեր ես թէ արցումք թափել,  
 Թէ ըսփոփել կըրցեր ես դուն՝ տառապահար հոգի մ'երբեք,  
 Ուրեմըն այս «ցաւի հովտէն» գուր չես անցեր ու տառապեր:

Եթէ երբեք շէնքի մ'համար քար ես կոփեր,  
 Կամ գործաւոր եղեր ես ու կամուրջ կապեր.  
 Եթէ երբեք մըշակեր ես արտ ու այգի,  
 Արծանի ես յաւերժական յիշատակի:

Ամէն ինչ կեղծ է, ամէն ինչ սուտ,  
 Մեր գըլխուն վերեւ երկինք մ'անգութ.  
 Սա լուսանաճանչ արեւուն տակ՝  
 Մեր սրբութեան մէջ մըշտատեւ մութ:

Մենք նոյն մարմնի մասերն ենք լոկ, նոյն ցաւերն են մեզ պատեր,  
 Նոյն մարմնի մասերն իրար՝ չեն ատեր, չեն յօշոտեր.  
 Բուժենք վէրքերը իրարու, մըխիթարենք մենք իրար,  
 Գուցէ տեսնէ, ըզգայ գուցէ ով լըքեր է մեզ՝ անտէր:

Անխըռով, անդորր նընչել,  
 Սա պարզ երկրնքի տակ,  
 Զր ցաւի, չը քրթմընչել,  
 Անյուշ, անյիշատակ:

Փամբակը թող չը նընշէ քու մըտքին, խեղճ քարեկամ,  
 Գիտցի՛ր թ'ամէն մէկ պահդ, ամէն մէկ վայրկեան,  
 Յաւերժութեան մէջ ակընթարթ մը չէ լոկ,  
 Ան կը կըրէ իր մէջ՝ անցեալն ամբողջ, ամբողջ ապագան:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

# ԺԱ — ԺԲ ԴԱՐԵՐԻ ՀԱՅՐԵՆԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՅԹԻ

## ՄԻ ՔԱՆԻ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս ժամանակաշրջանում հայ դիտութիւնն ու մշակոյթը շարունակում են զարգանալ բուն Հայաստանում և նորաստեղծ Կիլիկիան հայկական պետութեան մէջ:

Այդ զարգացումը տեղի էր ունենում քաղաքական բարդ իրադրութիւնների մէջ և ընկերային-տնտեսական հակասական պայմաններում: Հայաստանում բռնի տիրութիւն էին անում Սելջուկները, իսկ Կիլիկիայում Հայ Ժողովուրդը մղում էր դժուարին պայքար՝ իշխանութիւնը կայունացնելու և հզօրացնելու համար: Այսուհանդերձ, շարունակւում էին խոշոր աւատական կարւածաքային տնտեսութիւնների նոր դոյացումներն ու առաջընթացը, աւատական արտադրանեղանակի, արհեստագործութեան և դրամաիրային տնտեսութեան աճը: Զարգանում էին տարանցիկ առևտուրը, նաւագնացութիւնը, քաղաքներն ու քաղաքային կեանքը: Վերջինների մասին հետաքրքիր դիտողութիւն է թողել ժամանակակից դիտնական վարդապետ Սարգիս Շնորհալին. «Քաղաք ընտրութեամբ խմատասիրացն տուրևառիկ վաճառացն տեղի սահմանեցաւ: . . . Բայց են և ի մէջ քաղաքացն ընտրութիւնք, դի են, որ շահաւէտք են և բազմավաճառք, որպէս ծովեղերեայ քաղաքքն, որ զուսահանդիստն պատրաստական ունին և զնաւան բիրտաւոր բեռամբքն ընդունին յամենայն ուստեք, և են, որ ոչ նոյնպիսիք են»<sup>1</sup>: Այս գործում կարևոր դեր են կատարում իշխեցիկ մեծատունները, առևտրականները, քաղաքային դասի ունևոր միւս խււերը: Շարունակւում էր գիւղացիութեան ճորտացումը, աւելի որոշակի էր դառնում աշխատանքի հասարակական բաժանումը, սրւում էին դասակարգային հակասութիւնները: Այդանդաւորական, յատկապէս Թոնդրակեցիների, շարժումները, ունեցան իրենց ընկերային-զաղապարախօսական անդրադարձը: Այս ընդհանուր հիմքի վրայ որոշակի տեղաշարժեր էին առաջանում Հայ Ժողովրդի հանրային մտածողութեան մէջ, ինչպէս նաև՝ ազգային-հասարակական և մշակութային կեանքում:

Արդիւնաւէտ գործունէութիւն էր ծաւալւում ըստ մեծի մասին վանքերին աւրեսթեր միջնադարեան բարձր ընդթի դպրոցներում, որտեղ ստեղծւած էին դիտական տեսութեան և գործնականի, դրականութեան, արուեստի, մշակոյթի արարման ու զարգացման բաւարար հնարաւորութիւններ և ուր աւելւում և ստեղծագործում էր ժամանակակից մտաւորականութիւնը: Իւրացւում

<sup>1</sup> Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթողիկեայց, Կ. Գոլիս, 1826, էջ 145:

և երբեմն զարգացման նոր փուլ էին ապրում «ներքին գիտութիւններ»՝ փիլիսոփայութեան, քերականութեան, հոետորութեան, աստուածաբանութեան, զբաղանդութեան, արուեստների նուաճումները։ Բաւարար ուշադրութիւն էր նուիրում զարտաքին գիտութիւններին՝ Թուադիտութեան, երկրաչափութեան, տեղեկութեան, լեզուագիտութեան, բնագիտութեան, ալքիմիայի, երաժշտութեան, բժշկութեան, մարդակազմութեան ուսուցման գործին։ Սոքնը վիպալոգ բազմաթիւ ձեռագիր յուշարձաններ են պահպանուել և մեզ են հասել շատ արժէքաւոր վկայութիւններ զանազան հեղինակների կողմից։

Յիշեալ զպրոցները հանդիսացել են նաև գրչութեան խոշոր կենտրոններ, որոնցում բազմացում էին հայ և համաշխարհային գիտութեան, գրականութեան, արուեստի և մշակոյթի մեծարժէք շատ յուշարձաններ։ Ուսուցման գործը առաջ էր տարում նաև իշխանական և արքունական տներում։

Այս ժամանակաշրջանում մեծ հռչակ էին վայելում Անիի, Սանահնի, Հաղարատի, Արզիւնայի, Գրազարկի, Սկեռայի, Սև լեռան, Կարմիր վանքի, Շուշի անապատի զպրոցները։ Անուանի ուսուցչապետներ են եղել՝ Գրիգոր Մազիսարոյը, Յովհաննէս Մարկաւազ Իմաստասէրը, Ստեփանոս Մանուկը, Գէորգ Մեղրիկը, մասամբ Մխիթար Հերացին և ուրիշներ։

Բնական գիտութիւնների կ'փիլիսոփայութեան զարգացման ուղղութեամբ Հայաստանում մեծ աշխատանք էր կատարուել դեռևս նախորդ դարերի ընթացքում։

Հայերէնի էին վերածուել հին աշխարհի, վաղ միջնադարի քրիստոնէայ երկրների մի շարք հեղինակների գիտական երկերը, որոնք հիմք հանդիսացան հայ գիտական ու քննափիլիսոփայական մտքի զարգացման համար։ Հայ ընթերցողն արդէն ձեռքի տակ ունէր Աբիստոտէի, Զննոնի, Պորփիրի փիլիսոփայական երկերը, Բարսեղ Կեսարացու «Յաղագոս կազմութեան մարդոյ», Նեմեսիոսի «Յաղագոս բնութեան մարդոյ», Եւլիլիդէի «Երկրաչափութիւն» աշխատութիւնները։ Մի շարք հեղինակներ՝ Նիկիի Կողթացին, Դաւիթ Անյաղթը, Անանիա Շիրակացի, Գրիգոր Մազիսարոյը արդէն ստեղծել էին ուրոյն, ազգային գիտական ժառանգութիւն։

Հայերէնի լեզուական աստղածի հմտալի օգտագործմամբ Թարգմանաբար և ինքնուրոյնաբար կազմուել էին գիտափիլիսոփայական բազմաթիւ տերմիններ, մշակուել էր գիտական խօսք ու մտածողութիւն։ Միջնադարեան Հայ առաջաւոր մտածողները միանգամայն գիտականօրէն արժէքաւոր ներդրումներ ունեն թեկուզ յաճախ ոչ մինչև վերջ մշակուած, բայց պարզապէս հանճարեղ կուսհումներ և օգտակար արտայայտութիւն մտքերի միջոցով։

Յիշեալ ժամանակաշրջանի աչքի ընկնող դէմքերից է Գրիգոր Մազիսարոյը։ Նա գիտութեան ու մշակոյթի նոր ուսման փուլ է։ Լինելով հանրագիտակ, քաջածանօթ ինչպէս հին աշխարհի, այնպէս էլ բիւզանդական, ասորական և արաբական ճշգրիտ գիտութիւններին, փիլիսոփայութեանն ու մշակոյթին, և լինելով միաժամանակ մանկավարժ, նա խոշոր աւանդ է ներդրում հայրենի գիտութեան ու մշակոյթի զարգացման գործում։ Իրեն մանկավարժ, գիտնական և մտածող, նա հաստատւ է գիտութեանը, քաղապէս ճշգրիտ գիտութիւններին, նուիրում դրանք Հայաստանում արմատաւորելու գործին, պահանջում ծանօթանալ և օգտուել այլ ժողովուրդների այդ քնազաւառներում ձեռք բերած նուաճումներից։ Այս իսկ ելակէտով նա հայերէնի է Թարգմանուել Նիկիիդէի «Երկրաչափութիւն»ը, ջանում հրապարակ հանել և աւելի լայն կիրառութեան մէջ դնել Անանիա Շիրակացու Թուադիտական և տեղեկութեանական երկերը։ Գրիգոր Մազիսարոյը Մ. Արեղեանի բնութագրմամբ

«Մի բազմադէտ անձն է և հերա մէջ մարմնացել է իր ժամանակի վերածնունդի մտքի մի կողմը — չբաւականանալ միայն կրօնականով և եկեղեցական դպրոցով, Հայերի մէջ վերանորոգել և զարգացնել հին յունական գիտութիւնը, ուսումնասիրել մաթեմատիկայ, երկրաչափութիւն, բժշկութիւն, ծանօթանալ հին յունական գրականութեանը և ընդհանրապէս բազմակողմանի գիտանքներ ձեռք բերելը»<sup>2</sup>։ Ասածունք մերձենալու, միևնույն է թէ գերագոյն նպատակի հասնելու միակ ուղին, ըստ Գրիգոր Մազիստրոսի, սեփական անձը գիտութեամբ լուսաւորելն է։ «Ձի մերձենալ առ Աստուած բարի է յոյժ»։ Եւ ոչ այլ ինչ է հնար մերձենալ, եթէ ոչ գիտութեամբ լուսաւորել զանձն»<sup>3</sup>։

Այսպիսի նախադրեալ հիմքի վրայ էլ ԺԱ զարի վերջին կամ ԺԲ զարի սկզբին Հայաստանում գիտական փորձը յայտարարուեց մտածողութեան ճշգրտութիւնը հաստատող ամենահաւաստի միջոցը։ Այս տեսակէտի հեղինակն էր Յովհաննէս Սարկաւազ իմաստասէրը, որն հաւասարապէս փայլուն գիտնական էր՝ փիլիսոփայ, Թուարանագէտ, տիեզերագէտ, տոմարագէտ, արուեստաբան, գրող, երաժիշտ և, վերջապէս, մանկավարժ-ուսուցչապետ։ Մտածողութեան և իրականութեան փոխյարաբերութեան հարցում որոշակիօրէն մտահայեցողական տեսակէտ ունենալով, նա գտնում է, որ մտածողութիւնը գոյանում է զգալութիւնների միջոցով, իրերն ու երևոյթներն առաջնային են, աշխարհը ճանաչելի է զգալարանների շնորհիւ, երկրորդական, անանցական են պատկերացումը, գիտելիքը, միտքը, խօսքը։ Վերջիններիս ճշդութիւնը և առարկայականութիւնը հաստատում են առաջինները։ «Վասնզի ո՛չ բանն զիրս հաստատէ, այլ իրն՝ զբանն», քանի որ «իրն անխալ ունի զիրութեանն իւրոյ յատկութիւն»<sup>4</sup>։ Եթէ այդ այդպէս է, ուրեմն համոզուելու համար պէտք է գիտնել իրերին, շօշափելի իրականութեանը, ուղղակի՝ փորձին։ «Բայց չեմ յախճաւան, որ առանց քննութեան հաւատամ ամենայն բանից, զի առանց քննելոյ և փորձելոյ չէ պատեհ հաւանել ամենայն բանից»<sup>5</sup> հաստատապէս եզրակացնում է նա։ Այս առնչութեամբ ինչ որ չտրոգի նա կանխել է Անգլիացի մեծ իմաստասէրի՝ Զ. Պէյքընի հանճարեղ տեսութիւնը՝ փորձի մասին շուրջ 400 տարի ժամանակով։ Ընդգծելի է, որ Յովհաննէս Սարկաւազը աշխարհի իրերի ու երևոյթների վրայ յաճախ քննախոյզ քննադէտի աչքով է նայում և դրանց մեկնաբանութիւնն էլ տալիս է ըստ այդմ՝ քննադիտութեան տեսանկիւնից, անշուշտ կրօնական և աստուածաբանական աւանդական դրոյթներին միանգամայն համարալիս։ Նա համարձակ, պայծառ մտածող է<sup>6</sup>։

Հարկ է նշել Յովհաննէս Սարկաւազ իմաստասէրի նաև տոմարագիտական, տիեզերագիտական, Թուագիտական կարևոր նշանակութիւն ունեցող ներդրումները։ Դրանք ուղղակի առնչւում են նաև այլ ժողովուրդների տոմարագիտական և տիեզերագիտական մտքի զարգացման տարբեր խնդիրներին, ըստ այդմ էլ գիտական առաւել մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում։ Սրան պէտք է աւելացնել Յովհաննէս Սարկաւազ իմաստասէրի արուեստների տե-

<sup>2</sup> Մ. Արեղեան, Երկեր, Հատ. Դ, Երևան, 1970, էջ 34-35։

<sup>3</sup> Գրիգոր Մագիստրոսի ԲՊԵ-երը, ի լոյս ընծայեաց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 97։

<sup>4</sup> Ա. Արքաւաճաճ, Յովհաննէս իմաստասէրի մատենագրութիւնը, Երևան, 1956, էջ 238։

<sup>5</sup> Մատենադարան, Ժու. № 2595, Թ. 250ա։

<sup>6</sup> Մանրամասն տե՛ս Վ. Զալոյեան, Հայ փիլիսոփայութեան պատմութիւն (ուսանել), Երևան, 1959, էջ 224-231։

տութեան վերաբերեալ խիստ ուշադրաւ դրոյթները, ըստ որոնց բնութիւնն է արուեստների ճշմարիտ մայրն ու ուսուցիչը:

Ժամանակաշրջանի հայ գիտական մտքի զարգացման մասին պատկերացում կազմելու համար նուազ նշանակալից չեն նաև բժշկութեան ասպարէզում Հայաստանում և Կիլիկիայում ձեռք բերուած յանդուրժանները: Յայտնի է, որ Հայաստանում նախապէս էլ բժշկութիւնը զարգացման որոշ աստիճանի վրայ է եղել, բայց արաբական և քիւզանդական միջավայրի ու բժշկական համապատասխան սկզբնաղբւրների հետ անմիջական շփումները, ինչ խօսք, նպաստել են, որ այն աւելի բարձր աստիճաններ նուաճի: Ի տարբերութիւն գիտութեան և մշակոյթի միւս ճիւղերի, բժշկութիւնը բացառապէս աշխարհականների ձեռքն է անցնում, այն մշակում և ուսուցւում է աշխարհիկ, ժողովրդական լեզուով՝ միջին հայերէնով, մատչելի է դառնում ժողովրդական աւելի լայն խւանդին: Բացի այդ, բժշկութիւնը և բժշկութեան տեսութիւնն աւելի գործնական նպատակների են ծառայեցւում: Եստակապէս մարդու կազմութեան բնախօսական վիճակի հետաքննութեան համար կատարուող աշխատանքներում ի յայտ են գալիս աւելի արագ և աւելի շատ օգտակար լինելու, չարաղէտ հիւանդութիւնները կանխելու ձգտումները: Բժշկութիւնը շատ էր հեռանում բնադանցութեան ու խորհրդապաշտութեան ազդեցութիւններից, անկատու էր ախտաբական-գուշակողական շաղակրատանքներից և գիտական հիմքերի վրայ դրուած՝ ուսուցւում էր դպրոցներում: Այս տեսակէտից խիստ ուշադրաւ է միջնադարեան ականաւոր ուսուցչապետներից մէկի՝ Յովհաննէս Վանդանի Հայաստանում կենդանահրճումների, մարդակազմութեան և արեան շրջանառութեան ուսումնասիրման մասին հետեւեալ վկայութիւնը. «Հարց. բժշկութիւն որպէ՞ս ուսան: Պատասխանի. զոր հերձելով և զոր ճեղքելով, և զոր սովեցան (= Ծ) էին և դինի տային ըմպել, որ եռայր եռականին և զարժմունս (արեան — Փ. Ա.) տեսնալ՝ ուսան»<sup>7</sup>:

Նախընթաց և քննարկուող ժամանակաշրջանի Հայ բժշկութեան ու բժշկագիտութեան նուաճումների առաւելագոյն ցուցանիշը «Ջերմանց միխթարութիւն» աշխատութիւնն է, որը պատկանում է անուանի բժշկապետ Մխիթար Հերացու գրչին: Այն յստկանչական է ոչ միայն բազմաթիւ, յատկապէս՝ սուր վարակիչ հիւանդութիւնների առաջացման, նրանց էութեան, միջավայրի, ախտանշանների, ախտաճանաչման, բուժման վերաբերեալ բազմաթիւ հարցերի ընդգրկմամբ, դրանց չանգամանալից ու համակողմանի քննութեամբ, այլև գիտական բարձր մակարդակով ու գործնական նպատակադրութեամբ: Հեղինակը քաջատեղեակ է համաշխարհային բժշկագիտութեան նուաճումներին, հռչակաւոր բժշկապետներ Հիպոկրատի, Գալենի, Հաննաի (Մեսուի որդու), Հոնեյնի, Իսհակի, Էր-Ռազի, Իբն-Սինայի գործերին ու տեսակէտներին<sup>8</sup>, որոնց նկատմամբ ցուցաբերում է քննական պահանջկոտ մօտեցում: Նա Եւրոյն մտածող է, յաճախ հիմնւում է միայն իր փորձի ու դիտարկումների վրայ:

Հերացին յստակ տեսակէտ ունի մարդկանց առողջութեան և արտադին միջավայրի, հիւանդի մարմնի առանձնախտկութիւնների և հիւանդութեան փոխադարձ առնչութիւնների մասին: Քաջատեղեակ է մարդակազմութեանը, մարդու մարմնի բնախօսական գործունէութեանը: Հետաքրքիր է այն, որ նա մեծ կարևորութիւն է տալիս հիւանդութիւնների կանխելու միջոցա-

<sup>7</sup> Մատենադարան, ձեռ. № 5611, Թ. 83ա:

<sup>8</sup> Մխիթար Հերացի, «Ջերմանց Միխթարութիւն (նուսերէն)», Երևան, 1968, էջ 31:

ուումներին: Դրանք ախտորոշելիս, ըստ նրա, բժիշկը պէտք է գիտենայ հետ-  
քէն զրուցել հիւանդի հետ՝ իր ենթադրութիւնները ճշտելու համար: Ոչադրու-  
թեան արժանի է և այն, որ Միխիթար Հերացին զբւլ է նաև «աչքի անատոմիա-  
յի, Փիզիոլոգիայի, աչքի հիւանդութիւնների, ինչպէս և դրանց ապաքինու-  
թեան նպատակով մշակուած վերին աստիճանի բանական դեղանութիւնների զու-  
գորդումներից կազմուած մեծ թուով դեղատոմսեր»<sup>9</sup>:

Միխիթար Հերացին կատարել է նաև թարգմանութիւններ:

Հետաքրքիր է Գերմանացի բժշկապետ Ջեյդելի կարծիքը. «... Երբ  
որ մենք, օրինակ, առանց կանխակալութեան համեմատում ենք Հելլեղարդի  
մի քանի տասնեակ տարիներ առաջ լրջա տեսած «Բնագիտութիւնը» մեր Հայ  
վարպետի գործի հետ (խօսքը Հերացու «Ջերմանց միխիթարութիւն» երկի մա-  
սին է — Փ. Ա.), ապա մենք վճռականօրէն առաջնութեան պսակը յանձնելու  
ենք վերջինիս՝ բնութեան հիմնաւոր իմացութեան, հետեղական, ուրոյն մը-  
տածողութեան և քնազանցական նախապաշարումներից լիովին զերծ լինելու  
համար»<sup>10</sup>:

Տիեզերագիտութիւնը, Թուագիտութիւնը, երկրաչափութիւնը, ալ-  
քիմիան շարունակուած էին յարատեւել՝ կիրառութիւն գտնելով համապատաս-  
խան բնագաւառներում: Երկինքը, երկնային մարմինները, արարչագործու-  
թիւնը շարունակուած էին զբաղեցնել մարդկանց միտքը: Առանց Թուաբանական  
և երկրաչափական հաշուումների, բնական է, չէր կարող ծաւալուել զարգացած  
առևտուրը, չէին իրագործուի տնտեսական և հարկային գործարքները, բարդ  
շինարարութիւնները: Ալքիմիան ևս պիտի տեղաշարժուէր զարգացող առևտու-  
րի և արհեստագործութեան հետ համընթաց, որպէսզի հնարաւոր լինէր մե-  
տաղների, խեցեղէնի, ներկերի, դեղանութիւնների, կաշուի մշակումն ու արտադ-  
րութիւնը:

Բնական գիտութիւնների նկատմամբ անող հետաքրքրութեան, աչ-  
խարհը բնագիտորէն ընկալելու և բացատրելու որոնումների արդիւնք է նաև  
այն, որ փորձ է արւում դիմելու չափածոյ խօսքի ներդրածութեանը նաև այս  
բնագաւառում: Այդ փորձը, ի հարկէ, նաև յիշեալ գիտութիւնները դիւրին ու-  
սուցանելու և տարածելու նպատակ է ունեցել:

Հայ գրականութիւնը մինչև ԺԱ-ԺԲ դարեր թէպէտ չըջադարձային  
յեղաբեկում չի ապրում և չի արձանագրում ակնատու յաջողութիւններ, սա-  
կայն, նոյնպէս որոշակի առաջընթացի մէջ է թէ՛ ներքին թովանդակութեամբ  
և թէ՛ արտաքին բնորոշ յատկանիշներով: Նախ՝ Ժ դարում սկսուած ու Գրի-  
գոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» հանճարեղ երկով ամրացուած տե-  
ղաշարժը շարունակուած էր առաջ մղուել ընդհուպ մինչև սելջուկեան բռնու-  
թիւններին ծանր տարիները: Մեր դպրութեան շատ օջախներում ստեղծագոր-  
ծական յամուռ աշխատանք էր տարւում նաև գրականութեան ապարելղում:  
Ըստ մեծի մասին հոգեւոր եկեղեցական տարազի տակ ծնւում են բազմաթիւ ծա-  
ւալուն ու փոքր երկեր, առաւելապէս՝ ճառաբարական, մեկնաբանական և դա-  
ւանաբանական բնոյթի: Դրանք ժամանակի համազգային կենսաքի պահանջների  
արտայայտութիւն էին՝ իրենց գիտա-մշակութային և հասարակական թէպէտ  
զեւ ևս չամբողջացած, հաստատուն ձևի ու ընդհանուր յայտարարի չբերուած

<sup>9</sup> Ա. Կոնյեան, Միխիթար Հերացի, «Պատմա-բանասիրական հանդէս»,  
1968, № 2, էջ 86. մանրամասն տե՛ս անդ, էջ 81-88:

<sup>10</sup> Միխիթար Հերացի, Ջերմանց Միխիթարութիւն (ուսերէն), էջ 30-  
31:

վիճակում։ Այս առումով առ այսօր ըստ էութեան նուազ քննուած և գնահատուած այդ երկեւն ունեն ընկերային-տնտեսական, հասարակական-քաղաքական, ազգագրական, մշակութային, գրական ու լեզուական կարևոր նշանակութիւն։ Դրանք հայրենի բնութեան, Հայ մարզու կեանքի, առարկայական միջավայրի վերաբերեալ շատ արժէքաւոր նիւթ ու գեղարուեստական խօսք են բովանդակում։ Աշխուժանում են աշխարհիկ արամադրութիւնները, խորանում է ուշադրութիւնը երկրաւոր կեանքի հանդէպ, շօշափւում են առօրեայ կենցաղային հարցեր, ի վերջոյ, այդ բոլորը յանգեցնում են բնութեան և իրական ու ճշմարիտ կեանքի յաղթանակին՝ գրականութեան և արուեստի մարզերում, որն այնքան ցայտուն արտայայտուած է Յովհաննէս Սարկաւազ Իմաստասերի՝ սարեակին նուիրուած հանրայայտ բանաստեղծութեան մէջ։ Քիան իմաստութեանը ոտանաւորն արուեստի տեսութեան իւրօրինակ հանգանակ է, գրուած գեղարուեստական պատշաճ ձևի մէջ, որը գիտակցական խոր շրջադարձի արդիւնք է և ունի պատմա-գեղագիտական ու փիլիսոփայական մեծ նշանակութիւն։ Հեղինակը ազդարարում է, որ փոքրիկ սարեակի երգը գերադանց է բոլոր բանաստեղծների երգերից, որովհետև այն բնութեան իսկական ձայնն է, կեանքի, առկա իրականութեան երգը, ըստ որում՝ առանց արուեստականութեան ու մտացածին հնարանքների։ Արուեստը պիտի բխի բնութիւնից, պիտի անդրադարձնի բնութիւնը, կեանքը, պիտի լցուի նրանցով և ոչ թէ հեռանայ, դատարկուի նրանցից։ Այս է հեղինակի եզրակացութիւնը, որը իր ժամանակի միանգամայն նոր համոզմունքն էր և իր միջավայրին նոր պահանջը։ Այն աստիճանաբար աւելի հաստատուն տեղ է գտնում, դառնում է տիրական եւ իբրև նիւթ ու բովանդակութիւն, եւ իբրև ազանցք ու ձև։

Պատմա-հայրենասիրական նիւթերն աւելի յաճախ մշակւում են նաև քնարերգութեան մէջ։ Ոչ միայն շարականներ ու ոտանաւորներ են գրւում այս բովանդակութեամբ ու ոգով, այլև՝ ծաւալուն ողբեր, պոէմներ։ Առաջին անգամ օղտադործւում են տաղաչափական նոր, բազմաղան ձևեր։ Յատկապէս աւելի լայն կիրառութիւն են գտնում աշխարհիկ յափերը։ Յաւելը ևս վերջնականապէս մուտք է գործում քնարերգութեան մէջ և մինչև իսկ հանդիսանում բերթողական արուեստի վարպետութեան չափանիշ։

Ի յայտ են գալիս գրական նոր տեսակներ՝ պատմական պոէմ, յափածոյներրոզ, հանելուկ, առակներ և այլն, որոնք յագեցած են լինում ժողովրդական լեզուա-մտածողութեան բազմազան տարրերով։

Մանաւորաբար ընդգծելի է Մ. Գոչի առակների պարագան, որովհետև ըստ էութեան նրանցով է սկիզբ առնում մաքուր գեղարուեստական արձաւր հայ իրականութեան մէջ։

ՓԱՅԼԱՅ ԱՆԹԱՊԵԱՆ

(Շար. 1)

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

## ԳՐԻԳՈՐ Գ. ՊՈՂԱՐԵԱՆ

(ՄԱՀՈՒԱՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻԻ)

(1897 — 1975)

Ծնած է Անթէպ, 1897, յունուար 19ին։ Երէջ որդիին էր Պողարեան Գարեգին Քաւաւայի և Երէջկին Սանդուխտի։ Ուսումը ստացած է նախ Վարդանեան Վարժարանի և ապա Նորահաստատ Կիլիկեան ձեմարանի մէջ։

Առաջին համաշխարհային պատերազմի միջոցին, ընտանիքի միւս անդամներուն հետ, կը տաքադուի դէպի Համա և Սելի-միէ (Սիւրիա), 1915 յուլիս 29=11 օգոստոսին։

Յաջորդ տարին Գարեգին Քհն. Պողարեան, խումբ մը քահանաներու հետ կ'աքորուի Թաֆրիէ, Պուէյրէ (Ադր-Յորդանան), Յուլիս 17=30ին, որով ընտանիքի հոգը կը ծանրանայ իր վրայ։

Քահանաներու աքորէն երկու շաբաթ յետոյ, 1916, 2=15 օգոստոսին, Սելիմիէի մէջ տեղի կ'ունենայ ընդհանուր կրօնափոխութեան պարտաւորիչ ձևակերպութիւն մը։ Արձանագրութեանց քարտուղարներէն մին կ'ըլլայ Գրիգոր։ Ինքը, ինչպէս և իր ընտանիքին անդամները, ուրիշ կարգ մը ընտանիքներու հետ, զերծ կը մնան այդ հոգեխռով ձևակերպութենէն։

Հօրը բացակայութեան Գրիգոր իբրև հաշուապահ-քարտուղար կառավարական գրասենեակներու մէջ պաշտօն կը ստանձնէ 13=26 հոկտեմբերին. կը զնահատուի օսմանիւնի հմտութեան և աղուոր գիրին համար. իր պարտաճանաչութեան շնորհիւ կը շահի մեծաւորներուն վստահութիւնը, և կը մնայ պաշտօնի վրայ մինչև 1918, հոկտեմբեր։ Իր պաշտօնին բերումով ազատ կը մնայ նաև զինուորագրութենէ։

Քահանաներուն աքորը կը տէճ ութ ամիս։ Հեռաւոր այդ աքորավայրին մէջ կրօ-

նափոխութեան բռնագատումները անզօր կը մնան խախտելու հաւատքը Տ. Գարեգին Քահանայի և հնգեակ մը քաջասիրտ կարգակիցներու։ Տազնապալի և տոռապագին բազմաթիւ օրեր անցընելէ ետք ուխտապահ քահանան կը վերադառնայ Սելիմիէ իր զուակնեւորուն և ժողովուրդին մօտ, 1917, մարտ 31ին։

Դաշնակիցներու յաղթանակէն ետք կը վերադառնայ Անթէպ, 1919, օգոստոս 16ին, և Գրիգոր պաշտօնի կը կոչուի իբրև քարտուղար—ուսուցիչ՝ Եգիպտոսի Հայ Որբախնամ Ընկերութեան կողմէ հաստատուած Հայկական Որբանոցին։

Բայց Անթէպցիներուն վերաշինական աշխատանքը երկար չի մնար խաղաղ ընթացքի մէջ։ Ինքնապաշտպանութեան կոնք ծայր կու տայ 1920, ապրիլ 1ին։ Հայ բնակչութեան պարենաւորումը մեծապէս կը դժուարանայ. ուստի Որբանոցը իր կազմով 1920 մայիս 26ին Անթէպէն կը փոխադրուի Ճիւնիէ (Լիբանան)։ Գարեգին Քահանան ալ կը ստիպուի Անթէպէն վերջնականօրէն հեռանալ 1923, դեկտեմբեր 9ին, և առժամապէս կը տեղաւորուի Ճիւնիէ։ Երբ Գարեգին Քաւաւան իր ծխական ժողովուրդին հրաւերով կը փոխադրուի Հալէպ, Գրիգոր ալ հրաժեշտ կու տայ Որբանոցին և կ'անցնի Հալէպ, 1925ի վերջերը։ Հոն Կրթաբերաց Վարժարաններու հոգաբարձութեան անդամներուն հրաւերով 1926ին կ'ընդունի ուսուցչական պաշտօն յիշեալ վարժարաններու մէջ։ Յաջորդ տարին կ'ամուսնանայ Անթէպցի Օր. Գեղանոյ Յ. Խաչատուրեանի հետ։ Երկու տարի վերջ, 1929ին, կը կոչուի Կրթ. Վարժարաններու Տնօրէնի պաշտօնին, զոր կը վարէ մեռնաօրէն, արժանանալով աշակերտներու սիրտին,

յարգանքին, և երախտագիտութեան:

Հալէպ ապրած շրջանին կ'անդամակցի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Թաղական Խորհուրդին (1926—1930), Ամերիկաբնակ Այն. Թապցիներու Միութեան Խորհրդատու Մարմին, որպէս քարտուղար—Հաշուապահ (1929—1950), Ազգ. Վարչութեան Ուսումնական Խորհուրդին (1932—1935, և, 1937—1949), Ազգ. Գաւառական Ժողովին (1944—1949), Հ. Բ. Ը. Միութեան Կրթական Յանձնարարներ (1945—1949), Հալէպահայ Ուսուցչական Միութեան (1938—1950), Կրթա. սիրաց Միութեան Ընդհ. Ժողովի Մայր Դիւանին (1931—1950), և, Կրթասիրաց Շրջա. նաւարտաց Միութեան, որպէս նախագահ (1927—1948): Ասոնցմէ ոմանց իր մասնակցութիւնը չարունակած է քանի մը տարի ևս, մինչև իր Պէյրութ փոխադրուիլը:

Իր ուսուցչական և դաստիարակչական բեղուն գործունէութեան երեսնամեայ յորելեանքը կը կատարուի Հալէպի մէջ, 1950ի: Տնօրէնի իր պաշտօնը կը վարէ մինչև 1957, երբ աւողջական պատճառներով կը ստիպուի թողուլ իր գործը և Հաստատուիլ Պէյրութ:

Իր նոր բնակավայրին մէջ նոր գործի մը բեռը կու գայ ծանրանալու իր ուսերուն: Իրեն կը յանձնուի Հայ—Անթէպ պարբերաթերթին խմբագրութիւնը, 1962ին, զոր խղճ, մօտէն կը կատարէ 10 տարի, մինչև 1971, երբ տարիքն ու աւողջական փոփոխութիւնը կը ստիպեն դիմել որ քաջ գործը փոխանցէ ուրիշի մը:

Հայաստան կ'այցելէ 1970ին, և կը վերադառնայ խանդավառուած Հայրենիքի պայծառ իրականութեամբ: Իր Հայրենասիրութիւնը կ'ուզէ ցոյց տալ գործնականօրէն. ուստի իր ճոխ զբաղարանը, որ կը պարունակէր

1800 արժէքաւոր գիրքեր և պարբերականներ, կը նուիրէ Հայաստանի Ակադեմիային (1973):

Կը վախճանի 1975, Դեկտեմբեր 18ին, Պէյրութ, Հիւանդանոցի մէջ, նուիրեալ աշխատողի մը լուսաւոր յիշատակը ձգեեով ողջ մնացողներուն՝ իբրեւ Թանկագին Ժառանգութիւն:

Իր երկերէն և Հրատարակութիւններէն կրնանք յիշել հետեւեւները.

1.— Ընդարձակ Գրացուցակ Պօղարեան Գրատան. (վերահաստատուած Հալէպի մէջ, 1925ի վերջերը), էջ 62: Տպարան Արարա, 1932, Հալէպ:

2.— Կեմսի նը Շրջանի մը Սեմին: Դաս. տիարակի վերջին խօսքեր, ուղղուած Կրթա. սիրաց Վարժարանի շրջոնաւարտներուն (1930—1950), էջ 94, Տպարան Տիգրիս, 1950, Հալէպ:

3.— Յուցակ Այնթապի Հայերէմ Գրա. գիրանբու: Կը պարունակէ 35 զբաղիւնդներուն նկարադրութիւնը: Տես Պատմութիւն Անթէպի Հայոց, Բ. Հատոր, Խմբ. Գէորգ Ա. Սա. րաֆեան, Տպ. Լոս Անճէլէս, 1953, էջ 413-449:

4.— Ցեղասպան Թուրքը, Վկայութիւններ, քաղուած՝ հրաշքով փրկուածներու զբոյցներէմ, 208 էջ, Տպարան Շիրակ, 1973, Պէյրութ:

5.— Այնթապականք, Ա.— Այնթապցիներու տուրքը տպագրութեան, Հայ Մամուլին, Հայ Գրականութեան, և Հայ Մշակոյթին, 260 էջ, Տպարան Ատլաս, 1974, Պէյրութ:

6.— Այնթապականք, Բ.— Մահարձան. — Մահագրութիւններ, Դամբանականներ, և Կենսագրական Նօթեր, 752 էջ: Տպարան Ատլաս, 1974, Պէյրութ:

Ն. ԱՐԲ. ՊՈՂԱՐԵԱՆ

## ՊԱՏՄԱԿԱՆ

## ՀԱՅ ԱԶԳԻ ԿԱԶՄԱԿՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

(ԱՐՄԵՆԵՐ ԹԷ ՀԱՅԱՍՏԱՆԻՆԵՐ)

Հարցը նոր չէ: Հայ ազգի «Արմեն» և «Հայ» կրկնակ անուանակոչութիւնը պատմագրութեան մէջ առաջացրել է զանազան կարծիքներ և տարբեր մեկնաբանութիւններ: Ոմանք այս երևույթը բացատրել են լեզուաբանական ըստուգաբանութեան ճանապարհով, ուրիշներ՝ վերջին ժամանակներում յայտնաբերուած բնեռագիր արձանագրութիւնների նորագոյն գիւտերով, որոնց հիման վրայ էլ աշխատել են երևան հանել Հայ ազգի երկու կազմաւորիչ տարրերի գոյութիւնը:

Յայտնի է, որ Արմէն բառը նկատուած է հնդեւրոպական և կապուած է մեր թուարկութիւնից առաջ Դրդ դարի վերջերին և Յրդ դարի սկիզբներին Ուրարտու արշաւած Արմենական ցեղերի հետ, որոնք որպէս թրակիա-փոլիական ցեղերին պատկանող մի ճիւղ, ունեցել են հնդեւրոպական ծագում և եկել են Արևմուտքից:

Իսկ «Հայ» բառը բնեռագիր արձանագրութիւնների նորագոյն յայտնագործութիւնների համաձայն, կապուած է մեր թուարկութիւնից առաջ 14-րդ դարում Արևմտեան Հայաստանում ապրած «Հայասա» կամ «Յայասա» ցեղերի հետ, որոնք ապրել են Հաթեան (Հիթիթական) իշխանութեան տակ և յաճախ պատերազմի բռնուել իրենց անկախութեան համար:

Նշանակալից է միաժամանակ, որ թէ՛ Արմէնները և թէ՛ Հայասացիները համարուած են հնդեւրոպական ծագումով Արևմուտքից եկած ժողովուրդներ: Բայց նրանց ապրած ժամանակաշրջանը հայկական բարձրագոյնակի վրայ՝ իրարից տարբերուած է Ե-Ղ դարերի հետաւորութեամբ:

Հարց է առաջանում.

— Այդ երկու ցեղանունները պատմական արժեւորմամբ ի՞նչ տարրողութիւն ու կշիռ են ներկայացնում, որպէսզի իբրև անուանակոչութիւն (ծրոպոս) տրուէին Հայ ազգին:

Այսինքն՝

— Պատմական օրինաչափութիւնը ենթադրում է որ մի որևէ ցեղ, ազգ կամ ժողովուրդ իր անունը մի ամբողջ երկրամասի զանազան ցեղերից ու ազգութիւններից կազմուած բնակչութեան վրայ տարածելու և ընդհանուր անուան իրաւունքին բարձրացնելու համար անհրաժեշտ է, որ իր ժամանակաշրջանում լինի տիրապետող և իշխող տարր և հետևաբար՝ ներկայացնի քաղաքականութեամբ աւելի հզօր ուժ և կամ քաղաքականութեամբ աւելի բարձր մակարդակ, որպէսզի միև բոլորին ենթարկի իրեն և իր անունը պարտադրի նրանց, իր անուամբ ճանաչուած գտնելով նաև արտաքին աշխարհի կողմից:

Այս է եղել բոլոր ազգերի կազմաւորման ժամանակաշրջանի չափանիշը: Եւ այսպիսին է եղել մանաւանդ Հայ ազգի կազմաւորման դարաշրջանում Արմէնների պարտազան, որոնք՝ երբ մտնում են Ուրարտու և նուաճում հայկա-

կան բարձրամակարդ, իրենց քաղաքական իշխանութեան հետ բերում են նաև իրենց անուան տիրապետութիւնը, իրենց ենթարկելով Հայաստանի տարբեր ցեղաբնակիչներին: Ծիւղ է, որ Արմէնների և տեղական բնիկ ժողովուրդներին՝ Ուլղ-ուրարտացիներին, համաձուլման ընթացքը բարդ դժուարութիւններ կը կար ճանապարհով է քայլում, բայց արդէն հայկական բարձրամակարդակի տէրը, աշխիքն՝ իշխող ու ապագայ խոստացող տարրը Արմէններն են ճանաչում արտաքին աշխարհի պետութիւնների կողմից: Պատահական չէ, որ Շրջ դարում (Ն. Ք.) պատմական ասպարէզ իջած և այնուհետև հզօրացած Մարերի թագաւորութիւնը, որ քիչ ժամանակ առաջ նուաճել էր Ուրարտուն (մօտ 600)ին, Ն. Ք.) և կործանել Տուշպա մայրաքաղաքը, Արմէնների Արածանի և Տիգրիս գետերի հովիտներից դէպի հայկական բարձրամակարդ կատարած առաջացումից և խալդ-ուրարտացիներին նուաճելուց յետոյ (Քսենոֆոն), Ուրարտուի տէրը ոչ թէ երկրի բնիկ Ուլղ-ուրարտացիներն է ճանաչում, այլ եկուոր Արմէններին: Բնական է, որ մարական թագաւորութիւնը հետեւելով ժամանակաշրջանի պատմական իրադարձութիւններին և հսկելով պետական ու քաղաքական դէպքերի ընթացքի ու զարգացման վրայ, չուտով պիտի կարողանար տեսնել ասպարէզ իջած նորագոյն ուժերին, որոնց ուշագրաւ արժանիքներն ու գերազանց յատկութիւնները պիտի չկարողանար անտեսել: Եւ ահա մարական կայսրութիւնը, որին պատկանում էր Միջագետքի և Մերձաւոր Արևելքի քաղաքականութեան գերիշխանութիւնն ու անօրինութիւնը, որպէս Հայաստանի հարևան պետութիւն՝ առաջինն է լինում քաղաքական շահերի ճիշդ կողմնորոշմամբ՝ յիմուել պատմակա մօտ ասպարէզ իջած Արմէնների բաղկաւորութեան ու զինակցութեան վրայ:

Եւ իրօք, հետագայ դէպքերը ցոյց են տալիս, որ Մարերի հզօր թագաւորութիւնը դաշնակցում է Արմէնների հետ, նրանց հզօրութեան ընդունակութիւններից զգուշացած և մանաւանդ վախ կրելով նրանց անջատուելու հաւանականութիւնից՝ դաշնագրի մէջ է մտցնում հետեւեալ կէտերը.

1. Մշտական բարեկամութիւն՝ պաշտպանողական և ոչ յարձակողական փոխադարձ պայմաններով:

2. Բերգեր և ամրոցներ չկառուցել երկրի (Արմէնիայի) շուրջ:

3. Տարեկան 50 տաղանդ տուրք (= 241,500 Փրանք կամ՝ 200,000 ուլրի):

4. Միշտ օգնական բանակով օժանդակել Մարաստանին, 20,000 հետեակ, 4,000 ձիաւոր:

Մտնելով մարական ուժի հովանու տակ, դրոժ է լէօն, Արմէնները իրենց կազմակերպչական ջանքերը առաջ էին տանում: Մարական զօրքերի հետ կողք կողքի մարտնչելիս, քաջ կռուողի համբաւ են ձեռք բերում: Նրանց ահաւոր որպէս քաջ պատերազմիկների՝ Փիւնիկցիների միջոցով հասնում է մինչև հնդաւոր տեղեր, մինչև Հրէաստան: Երեմիա մարգարէն Բաբելոնի վրայ յարձակուելու համար հրաւերի կոչ է ուղարկում Արարտուհան, Մաննայի և Աւքանագեան թագաւորութիւններին: Այս նշանակում է, որ Արմէններն այդ ժամանակ յայտնի են դարձել չրջապատի աշխարհին որպէս քաղաքական և ուղղական հզօրութիւն ունեցող ժողովուրդ<sup>1</sup>:

Այսպիսով հայկական բարձրամակարդ ամենաապահով յենարանը, Հայ ազգի կազմաւորման չրջանում, համարւում էին Արմէնները, ինչպէս Մարաստանի, այնպէս և հետագայում՝ Աքեմենեան Պարսկաստանի համար: Եւ ա-

<sup>1</sup> Լէօ, Հայոց Պատմութիւն, հատոր Ա., Երևան, 1966 թ.:

հա, այս իսկ հանդամանքով, Մարերի և հետագայում՝ Պարսկեների արտաքին նուաճողական քաղաքականութեան մէջ կշիռ ներկայացնող ուժ են համարուած Արմէնները։ Միւս կողմից, Արմէնները երկրի կեանքում, իրենց ձեռքին էին վերցրել երկրի քաղաքական կեանքի ղեկավարութիւնն ու զինուորական ուժի առաջնորդութիւնը։ Դա նշանակում էր, իրենց զլխաւորութեամբ իրենց ետեւից տանել երկրի ներսում ցեղերի միաձուլման և երկրի ներքին կեանքի զարգացման գործունէութիւնը։ Մարական քաղաքականութիւնը ճիշդ էր հաշուել։ Միասնական ու միաձույլ Արմենիա ունենալու դէպքում իբրև հարստութեան աղբիւր՝ նրա զինակցութիւնից ու հաւատարմութիւնից կարելի էր լաւագոյնս և առաւելագոյնս օգտուել։ Ճիշդ այս նպատակին համար էլ Կիւրոսը անձամբ գալիս է Արմենիա, ինչպէս մեզ պատմում է Քսենոֆոնն իր «Կիւրոպեդիա» գրքում, որպէսզի միջամտի հաշտութիւն գոյացնելու և խաղաղութիւն հաստատելու համար բնիկ Սալդ-ուրարտացիների և եկուոր Արմէնների միջև։ Կիւրոսի այս միջնորդութեան ընթացքում Արմէններին հովանաւորելու նրա միտումները բոլորովին էլ աննկատելի չեն։ Այսպիսով, Կիւրոս հաշտութիւն է ստեղծում, որով Սալդ-ուրարտացիները պիտի կարողանային Արմէնների դաշտաւայրերը հերկել ու ցանել (հումանաբար որոշ տուրք տալով), իսկ Արմէններն էլ, փոխադարձաբար պիտի օգտուէին նրանց լեռնային արօտավայրերից։ Այսպիսով, նրանք հաւատարմութեան խոստումներ են տալիս միմեանց և համաձայնում են հետագայում իրարու միջև հաստատել ամուսնական ու խնամական կապեր, ապա՝ ընդհանուր ուժերով պաշտպանուել թշնամիներից, եթէ մէկն ու մէկին մտանդ ապառնար<sup>2</sup>։

Արմէնների և Սալդ-ուրարտացիների այս խաղաղ համակեցութիւնը տալիս է այն արդիւնքը, որ տեղական բնակչութիւնը այլ բնիկների հետ հետզհետէ ձուլւում է Արմէնների մէջ և ապագայ դարերի ընթացքում գոյանում է այժմեան Հայ Ժողովուրդը։

Ահա թէ ինչպէս, այնուհետև, օտարների կողմից բովանդակ Հայաստանի ճանաչում գտած անունը դառնում է Արմենիա, իսկ բնակչութիւնը՝ Արմէններ։ Իսկ պատմութեան տուեալներով «Արմէն» բառին առաջին անգամ հանդիպում ենք Դարեհ Ա. Աքամենեանի (522-496) Բիհիստունի (այժմեան Քիրմանշահի մօտ) բարձր քարաժայռի վրան քանդակած քեհեազիր արձանագրութիւնում, որ գրուած է երեք լեզուներով՝ հին պարսկական, էլամական և բաբելոնական։

Այսպիսով, Արմէնները հանդիսացան հայկական բարձրամանդակում համաձուլման գործողութիւնը զլխաւորող ցեղեր։ Այսինքն՝ ձուլելով ու ձուլուելով նրանք եղան պատմական Հայ Ժողովուրդը ձևաւորող տարրերը հայկական լեռնայնաբնի խառնարանում։ «Հարկ է ընդդռնել, գրում է Եղիա Քասունին, թէ ամբողջ բաղակցութեան պատմական էութիւն տուող բիւրեղացոյժ տարրն էր Արմէն ցեղը, թէև ոչ թուապէս առաւելագոյնը, սակայն անենէն առողջն ու կենսաւէտը, որով կրցաւ միւսներն ալ բեղմնաւորել<sup>3</sup>։

Եւ վերջապէս՝ պէտք է նկատի ունենալ, որ Արմէնների՝ որպէս ազգութիւն կազմաւորման շրջանը զուգադիպում է այսպէս կոչուած պատմական ժամանակաշրջանի, երբ արդէն բացի պատմական քեհեազիր արձանագրութիւններից, Յոյն հեղինակներ (Հերոդոտոս, Քսենոֆոն, Պլինիոս, Պլուտար-

<sup>2</sup> Յ. Մամանդիան, Քննական Պատմութիւն, Խաղաղ Ա։

<sup>3</sup> Եղիա Քասունի, «Հայ Մշակոյթի Պատմութիւն», Պէյքուք, 1954 թ., էջ 67։

քոս, Ստորաբոն և այլն) հանդէս են գալիս իբրեւ պատմութիւն հաղորդող հասարակ աղբիւրներ :

«Հայասա» և «Հայասացիներ» վարկածը շատ մեծ հնութիւն չունի և միայն վերջին յիսնամեակում առաջացած տեսութիւն է պատմագրութեան մէջ: Այժմ անհրաժեշտ է համառոտակի ծանօթանալ Հայասայի կամ Հայասացիների պատմութեան կարևորագոյն պարագաներին, իմանալու համար թէ ի՞նչ են ներկայացրել իրենցից և ի՞նչ հզօրութիւն ու քաղաքական ազդեցութիւն են ունեցել հայկական լեռնաշխարհի բնիկ ցեղերի վրայ:

Մեր ազգի «Հայ» անուանակոչութիւնը Հայաստայի կամ Հայաստացիների հետ պատահական նմանութիւն ունի և դրանք իրար կապելու վարկածը իր այժմեան գոյութեամբ խիստ տարակուսելի է թուում մեզ:

Բայց հարցը արդէն պատմագրութեան մէջ ուշադրութեան արժանացած կարևոր խնդիրներից է: Ոմանք արդէն հաստատուած ճշմարտութիւն են ընդունում այն, հակառակ իրենց կասկածներին: Բառի «սա» վերջնամասնիկը համարում են փոքրասիական լեզուներում տեղ ցոյց առնող ածանց, ինչպէս պարսիկներից փոխառեալ հայերէնի «ստան» վերջնաւորութիւնը (կրելմեր), և «Հայ» արմատը համեմատելով մեր ազգին տուած «Հայ» անուանակոչութեան հետ, եզրակացնում են որ Հայը՝ Հայասացիներից պէտք է առանանայ: Դժբախտաբար նմանութիւնները որքան արտաքին, նոյնքան խաբուելի են: Նշանակում է, այս առթիւ տրուած քաջատրութիւնները ինչքան էլ ձգտեն ապացուցել Հայաստայի և Հայաստացիների գոյութեան փաստը, այնուամենայնիւ, նրանից բխող եզրակացութիւնները կարիք ունեն վերաւորւում: Եւ երևում է, որ այս տեսութեան կողմնակից պատմադէտները իրենց պատմական ծանօթութիւնների ստուգութեան հարցում այնքան վճռական չեն, որքան նրանցից հաւանած իրենց եզրակացութիւններում: Որովհետեւ նրանք՝ իրենք իրենց իսկ խոստովանութեամբ յայտնում են, թէ Հայասա երկրի ու ժողովուրդի մասին շատ քիչ բան գիտեն, և ինչ որ գիտեն, այն էլ միջոցաւարար՝ թշնամի պետութեան արձանագրութիւններից քաղած տեղեկութիւններից գիտեն:

Փաստն այն է, որ Հայասացիները Հայ ազգի կազմաւորման ժամանակաշրջանից 6-7 դար առաջ պատմութեան ասպարէզից քնաջնջուած ժողովուրդ են եղել և որ ոչ մի յիշատակ կամ յիշատակութիւն չեն թողել: Նրանց թագաւորները ապրած են եղել հպատակութեան տակ իրենց հարևան Հաթեան մեծ ու հզօր կայսրութեան: Հայասացիները հազիւ մի 100 (կամ 150) տարուան կիսանկախ կեանք են վարել և ապա՝ պատմութեան ասպարէզից անհետ կորչել ու գնացել են առանց իրենց սեփական պատմութեան մասին որեւէ յիշատակութիւն կամ վկայութիւն թողնելու: Հայասացիները նոյնիսկ չեն յիշատակում ասորեստանեան արձանագրութիւններում, որոնք այնքան յաճախ յիշատակութիւններ ունեն Հայասայի ժամանակակից Նայիրե-Ռաբարտական քաղմաթիւ ցեղերի մասին: Եւ արդարեւ, նրանց մասին ոչինչ պիտի կարողանայինք իմանալ նաև աշօր, եթէ Հաթեան բեհագիր արձանագրութիւնները երևան չըհանուէին Պողաքէօյի պեղումներից, որոնց շնորհիւ լոյս ախարհ է մերևում Հաթեան կայսրութեան պատմութիւնը, և նրան առնչաբար՝ Հայասայի կամ Հայասացիների մասին տեղեկութիւններ, Ուրեմն, Հայասային ու Հայասացիներին որպէս պետութիւն ու հասարակութիւն մեզ ծանօթացնում են Հաթեան արձանագրութիւնները:

Հայասա երկիրը, ասում է Աղոնց, առաջին անգամ պատմութեան լոյսին տակ երևում է 14րդ դարի (Ն. Ք.) սկզբում (իսկ Դըլապորտի կարծիքով՝

15րդ դարի վերջերում), Հաթեան Դուռխալիսա կամ Թուրքալիսա Բ-ի օրով (1410-1390), ըստ ոմանց՝ Գ-ի:

Պրոֆ. Սաչատրեանը Հիմնուելով Ֆորերը և Ուզնաստ գիտնականների կարծիքները վրայ՝ այս առթիւ գրում է. «Երբ Սասանի թագաւորը Մուրշիլիս Բ. իր թագաւորութեան 10րդ տարում (1355) մի արշաւանք ձեռնարկեց Սասանա-Ազգիի դէմ վերին Արմէնիայում, իր զօրքերի համար իբր հաւաքւածայր նշանակեց ինգուլաւան (այժմ՝ Անգլ) Տիարպէքերից դէպի հիւսիս՝ վերին Տիգրիսի վրայ, որն այնտեղ սահման էր: Արշաւանքը շարունակուեց Ազգիայի վրայով դէպի Վանայ լիճը, որի վրայ գտնուում էր Սասանա-Ազգի առաջին քաղաքը» (Տես Պրոֆ. Ա. Սաչատրեան, «Հայաստանի սեպ. շրջանի պատմութիւն», Երևան, 1933 թ.):

Հայասան կամ Սայասան այդ ժամանակ Արեւմտեան Եփրատից մինչև Վանայ ծով տարածուող պետութիւն է եղել Արեւմտեան Հայաստանում: Նրա սահմանները տարբեր հեղինակների մօտ քարտեզի վրայ տարբերում են իրարից<sup>4</sup>: Իսկ վերջին ընդունւած կարծիքի համաձայն Հայասան կազմաւորուել է հայկական լեռնայնարձի հիւսիս-արեւմտեան մասում և իր մէջ ընդգրկել է բաւական ընդարձակ երկրամասեր: Հայասան բաղկացած է եղել Գալլ, Արեւմտեան Եփրատ, Ճորոխ գետերի վերին հոսանքներում ընկած լիւաններից: Նա ռաժանուած է եղել երկու մասերի՝ համապատասխան երկու հիմնական ցեղախմբերի իրրև. Հայասա-Ազգի ցեղային միութիւն: Հիւսիս-արեւմտեան մասը կոչուել է Ազգի և հանդիսացել է համանուն ցեղախմբերի երկիր, իսկ երկրորդը՝ հարաւարեւմտեան մասը բուն Հայասան է եղել, Հայաստ ցեղախմբերի երկիր<sup>5</sup>:

Անմիջապէս հարկ ենք համարում յիշեցնել, որ Հայասայի սահմանների այս տարածութիւնը առաջացած մի շփոթութիւն է Հաթեան մեծ կայսրութեան տիրապետած սահմանների հետ, որովհետև Հայասան, ինչպէս պիտի սկսենք ծանօթանալ, միշտ հպատակ ու ենթակայ ժողովուրդ է եղել Հաթեան պետութեան գերիշխանութեան տակ և միշտ գտնուել է կիսանկախ վիճակում: Ուստի՝ Հայասայի պատերազմները եղել են ազատագրական և ոչ նուաճողական:

Այդ, Հայասայի պետութեան առաջին յիշատակութիւնը լինում է Հաթեան Դուռխալիսա կամ Թուրքալիսա Բ-ի օրով (Գ.) 1410-1393 թ. (Ն. Ք.). Այդ ժամանակ Հայասայի թագաւորն էր Մարիյաս: Երկու թագաւորների միջև տեղի է ունենում լուրջ պատերազմ և Հայասացիները ծանր պարտութիւն

<sup>4</sup> ա) Հայր Յ. Տաշեան Հայաստան գետեղում է Եփրատից մինչև Վանայ ծով տարածւող երկրամասի վրայ («Հաքիր և Ուրարտացիք», հատար Ա., 1931, էջ 626-627):

բ) Դրւագորտ, Աւ ծովի հարաւ-արեւելեան եզերքների վրայ, Տրապիզոնից մինչև Ճարխ գետի բերանը («Les Hittites»):

գ) Կէօթէ, Ա. Սաչատրեան, Հայասայի աշխարհագրական դիրքը եմքադրում են Կարիս-Վան տարածութիւնը:

դ) Ն. Աշոնց, Հայասան դնում է Կամախից մինչև Կարիս և Երզնակամ համարում է կենտրոնական վայրը («Histoire de L'Arménie»): (Տես՝ Նզիս Ա. Քասումի, «Նախահայկական Հայաստան», Պէյրուք, 1950):

<sup>5</sup> Թ. Ս. Յակոբեան, «Ուրուագծեր Հայաստանի պատմական աշխարհագրութեան», Երևան, 1960 թ., էջ 87:

են կրում : Մարիյաս կանչում է Հաթերի մայրաքաղաքը Պատուհաւ, մեծ Ար-  
քայ Դուտխալիասին ներկայանալու և դաշնագիր կնքելու նրա հետ : Մարիյաս  
դնում է և երկար ժամանակ իրեն պալատական կալանաւոր պահում արքու-  
նիքում : Մի օր պալատի գլուխում պտտելիս հանդիպում է արքունական մի  
գեղեցիկ կնոջ և պարզամտօրէն նայում նրան : Դա Հաթեան արքունիքի ներքին  
օրէնքներով համալրում էր ժահագու մեղքը : Եւ Հայաստանի խեղճ թագաւորը  
սպանւում է ողբերգական մահով :

Այս գէպի վրայ Հայաստացիները խիստ զայրտնում են և տնտիջապէս  
կարաններ կամ Գրաննիս անուամբ մի նոր թագաւոր ընտրելով ստուտիկ պա-  
տերազմի են ելնում Հաթերի դէմ : Պատմում է, որ մի քանի բուռն ճակատա-  
մարտեր են մղում Հայաստացիները, բայց չեն կարողանում վերջնական յաղթա-  
նակը նուաճել : Պատմագիրներէջ ոմանք Հայաստացիներին մի առանձին հզօրու-  
թիւն տալու ձգտումով փաստը շուտ տուած ձևով են ներկայացնում : «Դուտ-  
խալիաս երեք անգամ պատերազմեցաւ Պարաննիսի դէմ, բայց չկրցաւ յաղթել  
անոր : Հայաստացիք անկախ մնացին» (Քասունի) : Այս տեսակէտը ճիշդ և ար-  
դար չէ : Հաթերը չէին, որ Հայաստացիներին դէմ պատերազմի էին ելել, այլ  
վերջիններս էին սկսել պատերազմը և յաղթութիւնը նրանց իրաւունքը պէտք է  
լինէր, որին չկարողացան հասնել : Իսկ Դուտխալիաս կարող էր տնտիջապէս  
հաշիւը մաքրել Հայաստացիներէ հետ, եթէ միևնոյն ժամանակ նա արշաւանքի  
ելած չլինէր Դասգա ցեղերի դէմ, որոնք Հաթեան պետութեան հիւսիսային  
կողմերում ամբողջ Պոնտոսի երկրամասով մէկ տարածուած ապրում էին, և  
որոնք յանկարծ ապստամբել էին Հաթերի դէմ : Ուրեմն ճակատամարտ առող  
նախաբարձակները Հայաստացիներն են, որոնք ոչ մի զոհացուցիչ տրդիւնքի չը-  
հասնելով ստիպուած կրկնում են այն երեք անգամ : Եւ որպէսզի փաստերը յս-  
տակ բացատրուեն, պէտք է իմանալ, որ Հայաստացիներին այս յարձակումը  
«անկախ» պետութեան պատերազմ չէ, այլ հպատակ ժողովրդի ապստամբու-  
թիւն, որ միշտ էլ երևան է դալիս օգտուելու քաղաքական տիրող հանգամանք-  
ների նպաստաւոր առիթներից : Մարիյաս թագաւորի սպանութիւնը որպէս հա-  
կասութեան բարձրագոյն կէտ կարող էր պատերազմ առաջացնել, բայց ներկայ  
դէպքում՝ Հայաստացիներին ապստամբութեան մղող շարժառիթն էլ Դուտխալ-  
իասի որդի և յաջորդ Սուպակիւլիումի (1393-1355 Ն. Ք.) դահակաւութեան  
առաջին տարիներին ամբողջ Հաթեան պետութիւնում ծագած համատարած ա-  
պստամբութիւնը, որ բռնկուել էր երկրի մի ծայրից միւսը : Պատմաբան Ադոնց  
իր գրքի 41-42 էջերում («Histoire de L'Arménie») և Դըլապորտ իր գրքի 78-րդ է-  
ջում («Les Hittites») տալիս են այդ ապստամբած երկրների ցուցակը : Պատմա-  
դէտ Քասունին այդ «երկրները» սերում է համարել Վաւաւունք, որոնցից ո-  
մանք, նրա կարծիքով, Դասգաններին ցեղակից են եղել և դտնուել են Հաթեան  
սիրտպետութեան տակ :

ԳԷՈՐԳ ՀԱՏԻՏԵԱՆ

(Շար. 1)

## ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՕԶՈՒՄ

Կիրակի, 17 Հոկտեմբեր 1976, Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարին մէջ, Ս. Պատարագի ընթացքին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետի ձեռամբ եպիսկոպոսական կարգ ընդունեց Ս. Աթոռիս բազմամեայ և վաստակաւոր միաբան Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաբրիէանը:

Նորած Սրբազանը ծնած է Նրուսազէմ 1921ին, և զաւակն է բանաւոր և պատմաբան Կարապետ Գաբրիէանի, որ Մեծ Նդեռնէն ետք իբր ընտանիքով ապաստանած էր Նրուսազէմ և կը պաշտօնավարէր մորաքաղ ժառանգաւորաց Վարժարանին մէջ:

Աւարտել է ետք Ս. Թարգմանչաց Նախարարանը, հետևած է Դպրեւանքի Հնծայարանի բաժնին իբրև ազատ ուսանող. 1950ին ձեռնադրուած է սարկաւազ, իսկ յաջորդ տարին՝ արեղայ:

1952ին ճանաչուած է Ս. Թարգմանչաց Վարժարանի Տեսուչ, 1953ին զայն օժտելով Երկրորդականի բաժնով. Գերաշնորհ Սրբազանը այդ պաշտօնը կը վարէ մինչև այսօր:

Նրուսազէմի Պատրիարքութեան իբրև մուխակ, 1954-1957 կը գործէ Հիւսիսային Ամերիկայի մէջ, մայնը կ'ընէ 1963-1964, Ս. Յարութեան Տաճարի մորզութեան հանգանկութեան համար: Հարաւային Ամերիկայի մուխակ կը ճանաչուի 1961ին, և ապա կրկին անգամ 1966ին:

1967ին Ս. Էջմիածնի մէջ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետէն կը ստանայ Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան:

Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոս Նրուսազէմի մէջ զանազան պատասխանատու պաշտօններ վարած է, ինչպէս՝ անդամութիւն Տնօրէն Ժողովի և Գանձաւան Թանձնախումբի (1957-1961), և կրկին անգամ 1973ին, վերահսկչութիւն Ս. Տեղեաց և Ս. Յարութեան Տաճարի հայկական բաժնի մորզութեան:

«ՍԻՈՆ», յանուն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան, ջերմագին կը շնորհաւորէ Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գաբրիէանը, իրեն ցանկալով առողջութիւն և եկեղեցանուէր գործունէութեան բազմաթիւ տարիներ:

## ՏԻՐՈՒՆԻ

### ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՐՏԵԱՆ

Դեկտեմբեր 1 թուակիր և իր անձնական խարտուղարին ստորագրութեամբ գրուած նամակ մը կը գումարէր մեծ թաղամասերու և պատմաբան Յարութիւն Քիրտեանի, Նոյեմբեր 30ին պատահած, և արդիւնք քաղցկեղի:

Թէև հոգեբանօրէն պատրաստուած անխուսափելիին, որովհետև գիւլետի թէ տարիէ մը աւելի էր որ կը տառապէր այդ անբուժելի հիւանդութեամբ, սակայն գումը, ամփոփուած պաշտօնական նամակի մը քսնի մը տաղերում մէջ, զիս անակնկալի կը բերէր, ու ասով իսկ կը կրկնապատկէր կսկիծը կոնուստին:

Գրեթէ անանց հիմնական ուսումնի, այլ Քիրտեան մօտ կէտ դար տնընդհատ աշխատեցաւ և գրեց, հայ բանասիրութեան ու պատմագիտութեան բերելով իր մեծ վաստակը: Իր դատումներում մէջ միշտ տրամաբանօրէն գիտնական, սկզբունքներու անգիշտ տէր, գիտէր հրեշտակի նման բարի ըլլալ և միաժամանակ ամենէն խիստ քննադատի ձաղկազ լեզու գործածել: Ճշմարիտ Հայ մըն էր, և իր սէրը երևան կու գար այն տարօրինակ գուրգուրանքին մէջ, որով կը փնտռէր, կը գտնէր և գնելով կը փրկէր հայ արուեստի բեկորներ՝ թանկագին մանրանկարներով հարուստ հին ձեռագիրներ թէ հնատիպ գիրքեր, Գեօքսահիոյ յախճապակիներ թէ փայտափորագրութեան նմուշներ, տպածոներ թէ ոսկերչական-արծաթագործական գեղեցիկ կտորներ: Գրեթէ ամէն տարի նամարդութեան կ'ելլէր, ի խնդիր արուեստի այս ստարագիր բեկորներում: Պիտի չմոռնար թէ ինչպէ՛ս, տարի մը, Նորաշաղէմի իր պանդոկի սենեակին մէջ, ցոյց տալով նոր գնած մէկ թանկագին ձեռագիրը, խորունկ հառաչանքով մը կը բացագանչէր. «Ա՛խ, միայն թէ բաւարար դրամ ունենայի... ինչե՛ր կան հաւաքելիք ու պահելիք»:

Իրական սակաւագետ մըն էր. իր ճաշը ոչ մէկ տոնն տամ մը մածուկէն և կտոր մը հացէն աւելի չէր եղաւ. և արդէն ուսուցը անխուսափելի պատականութեան մը կատարումն էր միայն իրեն համար, առաւելագոյն՝ ժամանակի վատնում, երբ, իր բառերով, «որքա՛ն ըլլալիքներ կային...»: Երիտասարդ էր հոգիով, երիտասարդ՝ մարմնով: Երբ, հակառակ իր եօթամասուն տարիներում, կուրծքը ցցած և հաստատ քայլերով կը քայլէր, մեծ՝ «երիտասարդ»ներս, ներքին նախանձով ու հիացումով կը ջանայիմք քայլ պահել իրեն հետ:

Հայ բանասիրութիւնը և պատմագիտութիւնը վերջին շրջանի իրենց ամենէն հեղինակաւոր գէմֆերէն մին է որ կը կորսնցնեն այսպէս, մեծաւանդ այս օրերում՝ երբ այնքան նոսր են շարքերը:

Յարգանք իր սիրելի յիշատակին, և համգիտ՝ վաստակած իր էութեան:

ԱՐԱՏ ԳԱՆԱՏՅԱՆ

ԱԼԵՔՍ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆ

## ՇԱՐԱԹԱԿԱՆ ՀԱՒԱՔՈՅԹՆԵՐ

Ա. Մասնագիտական դասաստուգիւմ

Օգտուելով նախկին Երուսաղէմացի Տէթ. Կարօ Զաքարեանի քաղաքական կարճատեւ ալիքալուծներէն, Հաւաքոյթ մը կազմակերպուեցաւ Երկուշաբթի, 29 Նոյ. 1976, կ. վ. ժամը 4-5:30, որուն ընթացքին յարգելի Հոգեբոյժը խօսեցաւ «Ուսանելու Հոգեբանութիւնը» շատ շահեկան և աշխատեցողական նիւթին շուրջ:

Ուսանողներու Հետաքրքրութեան ապացոյց էին բազմաթիւ Հարցումները զորս անոնք ուղղեցին Տէթ. Զաքարեանին, բանաստեղծութեան աւարտին:

Բ. Գրող Վահրամ Մամեանին նուիրած գրական երեկոյ

Շաբաթ, 4 Դեկտ. 1976, երեկոյեան ժամը 6:30-8 տեղի ունեցաւ գրական Հաւաքոյթ մը, նուիրուած գրող Վահրամ Մամեանի ծննդեան յիսնամեակին:

Հանդէսը պատշաճ խօսքերով բացաւ Հայերէնի և գրականութեան դասախօս Պրն. Գէորգ Հատիտեան, իսկ յորելեարին կեանքին և մանաւանդ գրականութեան մասին շատ գեղեցիկ և հմտալից բանաստեղծութիւն մը ըրաւ Ընծալարանի աւարտական կարգէն Բարչ. Տիրացու Սիմոն Պալեան: Գործադրուեցաւ կոկիկ և յաջող գեղարուեստական յայտագիր մը, և փակման խօսքը կատարեց Պրն. Արայ Գալաճեան՝ որ յորելեարի մասին պատմած իր քանի մը յուշերով ներկայացուց մարդը և Հայր Վահրամ Մամեանի մէջ: Թորոգորական էղրակացնող խօսքերով Հանդէս եկաւ նաև Վերատեսուչ Գեորգ. Տ. Շահէ Արք. ԲՆՃՃԵԱՆ:

Գ. Առաքելոյցն Թաղէտսի և Բարթողիմէտսի

Առաջին լուսաւորիչներու՝ Թաղէտս և Բարթողիմէտս առաքելներու տօնին առիթով Հաւաքոյթ մը սարքուեցաւ Շաբաթ, 11 Դեկտ. 1976, երեկոյեան ժամը 7-8:15:

Օրուան տօնելի սուրբերուն մասին հակիրճ խօսքեր ընելէ ետք, Հանդէսը բացուած յայտարարեց Հոգչ. Տ. Հայկազուն Արք. Մեղիդեան: Իսկ ընդարձակ և պատմական ծանօթութիւններով ճոխացած բանաստեղծութիւն մը ը-

բաւ Հոգւ. Տ. Ասպետ Աբղ. Պալեան, որ յմոռցաւ նաև յիշատակել Հայաստանի առաջին դարերու ըրիստոնեայ նահատակները:

Գործադրուեցաւ շարականներէ և կրօնաշունչ ընթերցումներէ բաղկացած դեղեցիկ յալտազիր մը, իսկ փակման խօսքը մեծ յաջողութեամբ կատարեց Հոգւ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան: Հանդէսը աւարտեցաւ զՀայր մեր»ի համախումբ երգեցողութեամբ:

Դ. Հայ մշակոյթի երեկոյ

Շաբաթ, 18 Դեկտ. 1976, երեկոյեան ժամը 6.30-8.45, տեղի ունեցաւ Հայ մշակոյթին նուիրուած հաւաքոյթ մը, ղեկավարութեամբ Պրն. Գէորգ Հինդլիանի՝ որ նաև ըրաւ բացման խօսքը: Երեկոյի ընթացքին Ժառանգաւորաց աւարտական Հինգերորդ դասարանի ուսանողները ելոյթներ ունեցան անդլերէն լեզուով, ներկայացնելով Օրդ. Սիրարփի Տէր Ներսէսեանի, հանգուցեալ Յարութիւն Քիւրտեանի և հանգուցեալ Եղուարդ Իւթիւճեանի բանասիրական-գիտական վաստակը:


Երեկոյթի աւարտին, Պարոններ Փայլակ Անթապեան և Արայ Գալայճեան խօսեցան վերոյիշեալ բանասէրներու մասին և զնահատեցին անոնց դերը՝ մասնաւորաբար Հայ մշակոյթը օտարներուն ծանօթացնելու կարևոր աշխատանքին մէջ:

Ե. Հայկական եկեղեցիներու գումաւոր Յկարմերու ցուցադրութիւն

Շաբաթ, 25 Դեկտ. 1976, երեկոյեան ժամը 6.30-7.30 տեղի ունեցաւ հայկական եկեղեցիներու գումաւոր պատկերներու՝ մոզական լապտերով ցուցադրութիւն մը, ղեկավարութեամբ Պրն. Յարութիւն Սամուէլեանի:

Ցուցադրութենէն առաջ հայկական եկեղեցիներու և մենաստաններու անցեալին մէջ ունեցած դերին ու նշանակութեան մասին բացատրողականներ տուին Պարոններ Փայլակ Անթապեան և Յարութիւն Սամուէլեան: Ուսանողները մեծ հետաքրքրութեամբ դիտեցին Հայ եկեղեցիներու նկարները, և բազմաթիւ հարցումներ ըրին, որոնց պատասխանեց Պրն. Յ. Սամուէլեան:





\* Որ. 3 Դեկտ.— Ս. Կոյսի Ընծայման հանդիսատար Գախատունակը պաշտոնեցաւ Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Գեորշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոս:

\* Շք. 4 Դեկտ.— Ընծայումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Գեորշ. Տ. Ծահէ Արքեպիս. Աճէմեանի զխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժներով մեկնեցաւ Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսատար Ս. Պատարագը մատուց Գեորշ. Հանդիսապետ Սրբազանը: Ս. Պատարագէն ետք, ընկալեալ սովորութեան համաձայն, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն Ս. Աթոռիս և ազգիս բարերար Կիւլապի Կիւլպենկեանի և Կիւլպենկեան գերդաստանի անշնչեյաներու հոգիներուն համար:

\* Որ. 10 Դեկտ.— Առաջին Լուսաորչաց Գախատունակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Գեորշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիկեան:

\* Շք. 11 Դեկտ.— Ս. Առաքելոց և առաջին լուսաորչացն մերոց՝ Թադէոսի և Բարթողիմէոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Արդ. Յովակիմեան:

\* Դշ. 15 Դեկտ.— Նախատունակին ի Ս. Յակոբ Գախագահեց Գեորշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիկեան:

\* Եշ 16 Դեկտ.— Տօն Ս. Հարցն Եգիպտացոց: Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Ս. Մակարայ մատուռին մէջ Ս. Պատարագը մատուց խոստովանահայր Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան:

\* Շք. 18 Դեկտ.— Ս. Նիկողայոսի Աքանջեալագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան: Վերաբերումը կատարուեցաւ Տաճարի ներքին գաւթին մէջ գտնուող Ս. Նիկողայոսի սեղանին վրայէն:

\* Կիր. 19 Դեկտ.— Բարեկենդան Ս. Յակոբայ պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

\* Գշ. 21 Դեկտ.— Ս. Կոյսի Յղութեան տօնի հանդիսատար Գախատունակին ի Ս. Յակոբ Գախագահեց Գեորշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիկեան:

\* Դշ. 22 Դեկտ.— Յղութիւն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Գեորշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիկեանի զխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով

# ԲՆՏՈՆԵԿԵՆԷ



\* Դշ. 22 Դեկտ.— Երեկոյեան, հրէից Խանուկայի, քրիստոնէական Ս. Ծննդեան և իսլամական Հիճրէթի Նոր Տարիի առիթներով, Երոտաղէմի Քաղաքացետ Վսեմ. Թէոի Քոլլէքի կողմէ, Քաղաքացետարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Պատրիարք Ս. Հայրը և Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան:

\* Բշ. 27 Դեկտ.— Երոպացոց Ս. Ծննդեան տօնին առթիւ, կէսօրէ առաջ, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը ի գլուխ Միաբանութեան, շնորհատրական այցելութեան գնաց Ֆրանչիսկեաններու Գերշ. Կիսթոսիան և Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքին: Ապա, ընկերակցութեամբ Լուսարարացետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի, այցելեց Պապական Գերշ. Նուիրակին և Անկիթան Գերշ. Արքեպիսկոպոսին: Իսկ Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոս, Հոգշ. Հայրերու ընկերակցութեամբ, այցելեց Հայ Կաթողիկոսներու և Մարոնիք համայնքի մեծաւորներուն և Լուտերականներուն և Արաք Լուտերականներու Երէցներուն:

\* Եշ. 30 Դեկտ.— Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ընկերակցութեամբ Լուսարարացետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի և Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոսի, Իսրայէլի կառավարութեան Նախագահ Վսեմ. Փրօֆ. Էֆրայիմ Քազիրի աւարանքը երթալով, ներկայ եղաւ Նոր Տարուան առթիւ Քրիստոնէայ Հոգնող Պետերոն ի պատիւ տրուած ընդունելութեան:

մեկնեցան Գերթեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսատր Ս. Պատարագը մատուց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը և քարոզեց Ս. Կորնթիոնց մտատիպար ունեցած Հայ մայրերու դարերու ընթացքին ցուցաբերած զոհաբերող ոգիի մասին:

\* Որ. 24 Դեկտ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ ճախագահեց Լուսարարացետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

\* Ծբ. 25 Դեկտ.— Ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր Ժամարարն Էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Դարիպեան:

\* Կիր. 26 Դեկտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Թարութեան Տաճարի վերնատան մեր մատուռին մէջ: Ժամարարն Էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտարեան:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

|                                                                                            |                  |     |
|--------------------------------------------------------------------------------------------|------------------|-----|
| ԽՍՔԱԳՐԱԿԱՆ                                                                                 |                  |     |
| Յիսուն Տարի                                                                                | Ա. Գ.            | 310 |
| Յայտարարութիւն Մայր Աթոռի Դիւանէն                                                          |                  | 312 |
| ԿՐՕՆԱԿԱՆ                                                                                   |                  |     |
| Մեր Պարծանքի Առարկան                                                                       | Գ. Ս. ՃԻՆԻՎԻԶԵԱՆ | 313 |
| ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ                                                                              |                  |     |
| Մօրս                                                                                       | ԵՂԻՎԱՐԴ          | 315 |
| Աշնանային                                                                                  | ԳԵՈՐԳ ԼԱՏԻՏԵԱՆ   | 317 |
| Քառեակներ                                                                                  | Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ     | 318 |
| ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ                                                                                |                  |     |
| ԺԱ-ԺԲ Դարերի Հայրենի Գիտութեան ու<br>Մշակոյթի մի քանի Յատկանիշների մասին                   | ՓԱՅԼԱԿ ԱՆԹԱՊԵԱՆ  | 319 |
| ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ                                                                                |                  |     |
| Գրիգոր Գ. Պողարեան                                                                         | Ն. ԱՐՔ. ՊՈՂԱՐԵԱՆ | 325 |
| ՊԱՏՄԱԿԱՆ                                                                                   |                  |     |
| Հայ Ազգի Կազմաւորման Հարցի Ծուրջ                                                           | ԳԵՈՐԳ ԼԱՏԻՏԵԱՆ   | 327 |
| Եպիսկոպոսական Օծում                                                                        |                  | 333 |
| ՏԻՐՈՒՆԻ                                                                                    |                  |     |
| Յարութիւն Քիւրտեան                                                                         | ԱՐԱՅ ԳԱԼԱՅՃԵԱՆ   | 334 |
| Ծառաթական հաւաքոյթներ Ալեքս և Մարի<br>Մանուկեան Ժառանգաւորաց Կարծարանի<br>և Ընծայարանի մէջ |                  | 335 |
| Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ                                                                           |                  |     |
| Եկեղեցականք - Բեմականք                                                                     |                  | 337 |
| Բովանդակութիւն                                                                             |                  | 339 |

# C O N T E N T S

---

## EDITORIAL

|                                 |              |     |
|---------------------------------|--------------|-----|
| Fiftieth Anniversary            | <i>A. K.</i> | 310 |
| Communication from the Holy See |              | 312 |

## RELIGION

|                            |                             |     |
|----------------------------|-----------------------------|-----|
| The object of our boasting | <i>Kevork S. Genevisian</i> | 318 |
|----------------------------|-----------------------------|-----|

## POETRY

|              |                         |     |
|--------------|-------------------------|-----|
| To my mother | <i>Yeghivart</i>        | 315 |
| Autumn song  | <i>Kevork Hadidian</i>  | 317 |
| Rubayat      | <i>Mourad Manoogian</i> | 318 |

## PHILOLOGY

|                                                                         |                        |     |
|-------------------------------------------------------------------------|------------------------|-----|
| Some aspects of Armenian Science<br>and Culture in the XI-XII centuries | <i>Paylag Antabian</i> | 319 |
|-------------------------------------------------------------------------|------------------------|-----|

## BIOGRAPHIES

|                     |                             |     |
|---------------------|-----------------------------|-----|
| Krikor K. Bogharian | <i>Archbp. N. Bogharian</i> | 325 |
|---------------------|-----------------------------|-----|

## HISTORY

|                                         |                        |     |
|-----------------------------------------|------------------------|-----|
| On the formation of the Armenian nation | <i>Kevork Hadidian</i> | 327 |
| Ordination of Bishop                    |                        | 333 |

## OBITUARY

|                   |                       |     |
|-------------------|-----------------------|-----|
| Haroutune Kurdian | <i>Ara Kalaydjian</i> | 334 |
|-------------------|-----------------------|-----|

|                                                                         |  |     |
|-------------------------------------------------------------------------|--|-----|
| Cultural events in the Alex and Marie<br>Manoogian Theological Seminary |  | 335 |
|-------------------------------------------------------------------------|--|-----|

|                                             |  |     |
|---------------------------------------------|--|-----|
| Monthly news from the Armenian Patriarchate |  | 337 |
|---------------------------------------------|--|-----|

|          |  |     |
|----------|--|-----|
| Contents |  | 340 |
|----------|--|-----|

---

Yearly subscription: 10 U. S. Dollars  
 All correspondence should be addressed to:  
 Ara Kalaydjian, The St. James Press  
 P. O. Box 14001, Jerusalem — Israel